ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

11 փետրվարի 2020 թվական

4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՄՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 15.30

Հրաչյա Սարգսյան

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել են ավագանու 15 անդամ՝

Միքայել Մանրիկյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Անի Խաչատրյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Հայկ Միրզոյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Թեհմինա Վարդանյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Մարկոս Հարությունյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Արմեն Կոտոյյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արմեն Ներսիսյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Արման Անտոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Հռիփսիմե Առաքելյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Սուրեն Էյրամջյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Լյուդմիլա Սարգսյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Գրիգորի Երիցյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Լիլիթ Կիրակոսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Սաթենիկ Մկրտչյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Լևոն Զաքարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն:

Առաջին հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Միքայել Մանրիկյան, խնդրեմ:

Միքայել Մանրիկյան

-Շնորհակալություն: Անցյալ տարի ունեցել ենք աշխատանքային հանդիպում-քննարկում քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանի հետ թոքային քաղցկեղի հայտնաբերման սկրինինգ հետազոտության ծրագրի ներդրման վերաբերյալ: Կցանկանայի տեղեկանալ ի՞նչ փուլում է հարցը, ի՞նչ է կատարվել, քանի որ մինչ այս պահը տեղեկատվություն չունենք:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

Սերգեյ Հարությունյան

-Շնորհակալություն հարցի համար: Անցած տարի մենք նախատեսում էինք անցկացնել այդ սկրինինգային ծրագիրը, հայտարարեցինք մրցույթ, որովհետև այն գործառույթները, որոնք պետք է իրականացվեին այդ ծրագրի շրջանակներում պահանջում էին որոշակի նեղ մասնագիտական ռենտգեն սարքավորումներ և մասնագետների մասնակցություն: Երկու անգամ մրցույթը հայտարարելուց հետո, այդպես էլ չունեցանք մասնակից և այդ ծրագիրը չիրականացվեց:

Միքայել Մանրիկյան

-Շնորհակալություն: Երկրորդ հարցս հնչեցնեմ՝ կապված համատիրությունների հետ: Շատ համատիրությունների ղեկավարներ բարձրաձայնում են այս խնդիրն ու հայտնում իրենց անհանգստությունը: Նոր օրենքով յուրաքանչյուր համատիրության ղեկավար իր համատիրության ենթակայության տակ գտնվող յուրաքանչյուր շենքի համար պետք է առանձին հաշվեհամար ունենա, որ բնակիչներն այդ հաշվեհամարներին վճարումներ կատարեն: Կան համատիրությունների ղեկավարներ, որոնք անհանգստացած են, քանի որ իրենց համատիրության ենթակայության տակ կա 100-ից ավել շենք և այդ դեպքում պետք է 100-ից ավել հաշվեհամար բացվի: Ի՞նչ լուծումներ է տեսնում քաղաքային գործադիր մարմինն այս հարցում, որ ավելի թեթևացնի համատիրությունների ղեկավարների այս խնդիրը:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Կամո Արեյան

-Շնորհակալություն: Ձեր հարցը, հավանաբար, վերաբերում է վերջերս Ազգային ժողովի կողմից ընդունված անկանխիկ հաշիվներին: «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում կատարված փոփոխություններում կա մի դրույթ, որ հաշիվների վարման կարգը սահմանելու է ՀՀ կառավարությունը: Այդ կարգի հիման վրա կիրականացվի յուրաքանչյուր շենքի վարման հաշիվը: Կոնցեպտուալ առումով հեռանկարում, երբ կառավարությունը կընդունի նոր օրենք, դա չգիտեմ երբ կլինի, դարձյալ յուրաքանչյուր շենքի հաշվի վարման գաղափարը մնալու է ուժի մեջ: Այսինքն այն բացը, որ Դուք այժմ նկատել եք, դա կլրացնի ՀՀ կառավարության կողմից սահմանած կարգը:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Անի Խաչատրյան, խնդրեմ:

Անի Խաչատրյան

-2020թ. հունվար ամսվա առաջին օրերին՝ հունվարի 6-ին, Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Ավետ Պողոսյանը ֆեյսբուքյան ասուլիսի մասնակցեց «Ազատություն» ռադիոկայանի եթերում, որտեղ հարց հնչեց Ձեր ՀՀԿ-ական տեղակալ պարոն Ազիզյանի մասին, ով եղել է կառույցի փոխնախագահ կամ նախագահ: Հարցին ի պատասխան պարոն Պողոսյանն ասեց, որ ինքն իր տեսակով ազգայնական է, միգուցե, այդ պատճառով է ՀՀԿ-ի շարքերը համալրել:

Հարցս հետևյալն է՝ ընդունում եք, որ ՀՀԿ-ն ազգայնական կուսակցություն է և ՀՀԿ-ականներն ազգայնակա՞ն են:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Ավետ Պողոսյանը:

Ավետ Պողոսյան

-Շնորհակալ եմ հարցի համար: Հայաստանի Հանրապետական կուսակցությունը շատ վաղուց ստեղծված կուսակցություն է և շատ տարաբնույթ առաջնորդներ է ունեցել: Տարբեր մարդիկ են եղել կոսակցության առաջնորդ, այդ թվում՝ Աշոտ Նավասարդյանը, ՀՀ ազգային հերոս Վազգեն Սարգսյանը և այլոք:

2007թ. սկսած այդ կուսակցությունն ամբողջովին անցել է Սերժ Սարգսյանի քաղաքական ազդեցության տակ և մինչև հեղափոխությունն ամբողջովին ծառայել է այդ անձի քաղաքական մկրտումներին: Դա չի նշանակում, որ այդ կուսակցությունն անցած

ճանապարհ չունի: Եղել են շրջաններ, որ իրենք իրենց հռչակած սկզբունքներին համապատասխան են իրենց գործունեությունն իրականացրել և հենց այդ ժամանակաշրջանում էլ Ձեր նշած անձը եղել է այդ կուսակցության անդամ: Վերջին 10 տարիների ընթացքում նա զբաղեցրել է պետական պաշտոններ և կուսակցական պատկանելություն ունենալու իրավունք չի ունեցել:

Անի Խաչատրյան

-Պարոն Պողոսյան, ունեցել է և խոսքը վերջին 10 տարիների մասին է խոսքը: Ձեր տեղակալը եղել է Ավան վարչական շրջանի ՀՀԿ-ի երիտասարդական թևի համակարգողը: Շնորհակալ եմ պատասխանի համար:

Շնորհավորում եմ Ձեզ, փաստորեն Ձեր համար հարմարավետ է ՀՀԿ-ի հետ աշխատելը:

Ավետ Պողոսյան

-Ես պնդում եմ, որ Դուք սուտ տեղեկատվություն եք տարածում և հորդորում եմ այլևս սուտ տեղեկատվություն չտարածել:

Հրաչյա Սարգսյան

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Հայկ Միրզոյան, խնդրեմ:

Հայկ Միրզոյան

-Շնորհակալություն: Այսօր էլ քննարկեցինք առողջապահական հիմնարկներից մեկի հարցը: Նախորդ նիստի ժամանակ հարց տվեցի, թե արդյոք մեր առողջապահական համակարգում ունենք վնասով աշխատող կազմակերպություններ, որոնք տարեցտարի պարտքեր են կուտակում: Հիմա ևս ուզում եմ այս հարցին անդրադառնալ:

Խնդրում եմ տեղեկացնել, եթե կան նմանատիպ հիմնարկներ, փորձենք միասին առողջացման ծրագիր մշակել, որպեսզի ստիպված քայլերի չգնանք: Նշեմ, որ ընդհանրապես առողջապահությունը դա զարգացող օրգանիզմ է և այնտեղ պետք են ներդրումներ, որոնք և՛ պետական, և՛ մասնավոր սեկտորից կարող են լինել:

Մենք 2018թ. համեմատ 2019թ. կրկնապատկեցինք ներդրումները Երևանի բյուջեով, իսկ 2020թ.՝ եռապատկեցինք, բայց այստեղ միայն ֆինանսական ներդրումները չեն, առաջնահերթ է նաև կառավարման խնդիրը: Եթե կան նմանատիպ կազմակերպություններ, որոնք անընդհատ, տարեցտարի վնասով են աշխատում, խնդրում եմ ներկայացրեք: Մենք էլ մեր առողջապահության աշխատանքային խմբով այդ գործին միանանք, փորձենք առողջացման ծրագիր մտցնել և խնդիրը լուծել:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

Սերգեյ Հարությունյան

-Շնորհակալություն հարցի համար: Ցանկանում եմ հստակ արձանագրենք, որ Ձեր բարձրացրած հարցերը հիմնականում երկու ոլորտի են վերաբերում, բայց ես կփորձեմ ամբողջովին պատասխանել:

Ինչ վերաբերում է ֆինանսական ներդրումներ կատարելու գաղափարին, մենք ֆինանսական ներդրում չենք կատարում բուժհաստատություններում: Որոշակի առարկայական գործառույթներով ենք մասնակցում առողջապահական հիմնարկների զարգացմանը և բարելավմանը: Քանի որ անում ենք այն, ինչն ուսումնասիրությունների և քննարկումների արդյունքում է ի հայտ գալիս, որ որևէ բուժհաստատությունում առկա է որևէ գործիքի խնդիր, հետազոտության սահմանափակման խնդիր կամ շենքային պայմանի բարելավման խնդիր: Ցանկանում եմ նաև հստակ արձանագրենք, որ բացի մեկ պոլիկլինիկայից, մնացած բոլոր բուժհաստատությունները համայնքի սեփականությունն են՝ իրենց տարածքով, այսինքն՝ արդյունքում բարելավում ենք նաև մեր տարածքները:

Ինչ վերաբերում է վնասով աշխատող բուժհաստատությունների հարցին, կրկին արձանագրում եմ, որ մենք այս պահի դրությամբ վնասով աշխատող հիմնարկ չունենք, բացի այն մեկ հիմնարկից, որն այսօր, ձեր որոշմամբ, տրվեց հավատարմագրային կառավարման:

Ինչ վերաբերում է ընթացիկ տարվա մեջ առաջացած ֆինանսական խնդիրներին, բացատրեմ՝ քանի որ օրենսդրական տարբեր փոփոխություններ, կարգավորումներ են լինում աշխատանքային և հարկային օրենսգրքերում, առողջապահության նախարարի հրամաններով չափորոշիչներ են փոխվում, հնարավոր է, որ այս պահին չունենանք, բայց ընթացիկ տարվա մեջ որոշակի խնդիրներ կարող են ի հայտ գալ: Օրինակ՝ այժմ քննարկվում է մի դեպք, որ բարձրացվել է նվազագույն աշխատավարձի շեմը և ունենք փոքր պոլիկլինիկաներ, որոնք ունեն քիչ թվով բնակչություն, որոնց առջև այս պահին կանգնած է մարտահրավեր: Այս պահին, երբ իրենց բյուջեի այդ փոփոխությունը, վերահաշվարկն անում են, ստացվում է մոտավորապես մի քանի միլիոն դրամ մինուս՝ ամսական:

Ներկայումս քննարկումներ են ընթանում ֆինանսական, առողջապահության վարչությունների հետ՝ առողջապահության նախարարության համապատասխան պատասխանատուների մասնակցությամբ, որովհետև ծառայությունների գինը չի բարձրացել, բայց նվազագույն աշխատավարձի շեմն է բարձրացել: Ունենք պոլիկլինիկա, որ աշխատում է շատ փոքր եկամուտով, բայց գնածածկույթով աշխատում է, այսինքն՝ քաղաքացիներին կարողանում է մատուցել ծառայություններ և ունենալ որոշ քանակի աշխատատեղ, պահպանել իր բնականոն գործընթացը: Այնուամենայնիվ բարձրացումը բերում է որոշակի ֆինանսական դժվարությունների: Այժմ դրա վերաբերյալ քննարկումներ են տեղի ունենում:

Կրկին անդրադառնամ Ձեր հարցին՝ այս պահին չունենք վնասով աշխատող բուժհաստատություն, բայց քննարկումներ ենք անցկացնում, թե ինչպես անենք, որ տարվա ընթացքում ևս չունենանք: Ասեմ Ձեզ, որ դա մեր սկզբունքն էլ է, որ բժշկական հաստատությունը չպետք է աշխատի վնասով: Սակայն եթե չի կարողանում փակել այդ վնասը, պետք է խորքային ուսումնասիրել արդյոք դրա պատճառը մարդկային գործոնն է, թե ստեղծված իրավիճակի անելանելիությունը և նոր որոշում կայացնել:

Շատ շնորհակալ եմ աշխատանքային խմբի մասնակցության մասին Ձեր առաջարկի համար:

Հայկ Միրզոյան

-Շնորհակալություն, հարցը մշտապես ուշադրության կենտրոնում կպահեմ: Ես ուրախ եմ, որ այս պահի դրությամբ չկան, ապագայում եթե կլինեն, ցանկանում եմ իմանաք, որ մենք պատրաստ ենք այս համակարգային խնդիրը լուծենք հենց համակարգային սկզբունքների հիման վրա:

Երկրորդ հարցս հնչեցնեմ: Ինձ դիմել են Կենտրոն վարչական շրջանի մի քանի բնակիչներ, ովքեր բնակվում են Նորագյուղ կոչվող թաղամասում: Ծովակալ Իսակովի արձանի հարակից տարածքում, հատկապես ձնհալից հետո և առաջ, անձրևների ժամանակ, հողը բավականին սահել է փողոցի երթևեկելի հատված և այնտեղ արդեն նույնիսկ փոքր ծառեր են աճում: Խնդրել են հնարավորության դեպքում բարեկարգել այս տարածքը, որովհետև հատկապես երեկոյան ժամերին այնտեղով անցնելիս երթևեկության խնդիրներ են ունենում:

Հայկ Մարության

-Քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ պարոն Գրիգոր Հարությունյան խնդրեմ, եթե տեղեկատվություն ունեք ներկայացրեք, եթե ոչ, ապա կճշտեք և կներկայացրեք:

Գրիգոր Հարությունյան

-Պարոն Մարության, այս պահին տեղեկատվություն չունեմ այդ տարածքի մասին, կճշտեմ և կպատասխանեմ պարոն Միրզոյանին:

Հայկ Մարության

-Պարզաբանում կներկայացնի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Ավետ Պողոսյանը: Խնդրեմ պարոն Պողոսյան:

Ավետ Պողոսյան

-Մենք, ըստ էության, սա կընդունենք որպես ահազանգ, բոլոր նախապատրաստական փաստաթղթային աշխատանքները կիրականացնենք և կփորձենք հենց այս տարվա

բարեկարգման աշխատանքների մեջ այդ հենապատի կառուցումը ներառել:

Հայկ Միրզոյան

-Շնորհակալություն իմ և բնակիչների անունից:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Թեհմինա Վարդանյան, խնդրեմ:

Թեհմինա Վարդանյան

-Վարդան Մամիկոնյանի արձանի հարակից այգու մասին է խոսքը, որտեղ խաղահրապարակ կա, Խանջյան և Երվանդ Քոչարի փողոցների միջանկյալ հատվածում է գտնվում: Չեմ ասում պատմամշակութային արժեք է, ներքևում Գետառն է, բավականին մեծ մանկական խաղահրապարակ կա և առհասարակ այգի է: Այդտեղ վերջին օրերին մեծ տեխնիկա է աշխատում և տարածքն ասֆալտապատվում է: Խոսակցություններ են պտտվում, հիմա Դուք կփաստեք, կամ կհերքեք, որ այդ տարածքում, մեր վերջին վեճի թեմայի՝ վտանգավոր թափոնների հետ կապված, ինչ-որ բան է հիմնվում:

Այգում, խաղահրապարակի տարածքում ի՞նչ տեխնիկա է աշխատում, ինչու՞ է բետոնապատվում և նպատակը ո՞րն է: Այդտեղ իսկապես վտանգավոր թափոնների կայան է լինելու՞, խնդրում եմ դրա մասին մեկնաբանել, սա առաջին հարցը:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Ավետ Պողոսյանը:

Ավետ Պողոսյան

-Տիկին Վարդանյան, ըստ ամենայնի, խոսքը գնում է, որ այդտեղ նախապատրաստական աշխատանքներ են տարվում նոր ստեղծված կանաչապատման ՀՈԱԿ-ի կազմում գործող տեսակավորված աղբի կետի համար, այլ ոչ թե վտանգավոր թափոնների համար:

Հայկ Մարության

-Այսինքն, ինչպես հասկանում եմ, արդիականացվում է, կանաչապատման ՀՈԱԿ-ի եղած այդ տարածքն է ուղղակի կարգի բերվում:

Թեհմինա Վարդանյան

-Ոչ, ես այդպես չհասկացա, այսինքն ևս մեկ անգամ փաստում ենք, որ կենտրոնում, այգում՝ կենտրոնական վայրում, խաղահրապարակի կողքը, ինչ-որ թափոնների կամ այդ կանաչապատում բառն ամենևին չի քողարկելու այն ամենն, ինչ այնտեղ կատարվում է, այլևս կանաչապատ տարածք չի լինելու՝ թեկուզ 1սմ: Այսինքն, այգում, խաղահրապարակի կողքը, պատմամշակութային արժեքի կողքը և Գետառի վերևում գործելու է ինչ-որ անհասկանալի կառույց, սրան նորմա՞լ եք վերաբերում:

Հայկ Մարության

-Ես այս պահին տեղեկատվություն չունեմ դրա վերաբերյալ, երբ ունենամ կասեմ:

Տիկին Վարդանյան, առաջին անգամ եմ լսում, պարոն Պողոսյանը փորձեց պատասխանել, կտեղեկանամ ինչի մասին է խոսքը, Ձեզ կպատասխանենք:

Թեհիման Վարդանյան

-Շնորհակալ կլինեմ, որ հետևողական լինեք, որովհետև, ըստ իս, դա իսկապես անթույլատրելի է, ծայրամասերում հաստատ կգտնվեն ավելի համապատասխան վայրեր և դա չի լինի այգու հաշվին:

Երկրորդ հարցս հնչեցնեմ: Պարոն Մանրիկյանը թոքի քաղցկեղի սկրինինգային ծրագրի հետ կապված հարց բարձրացրեց: Հարցին ի պատասխան փոխքաղաքապետն ասեց, որ երկու անգամ հայտարարվել է մրցույթ և, համապատասխան տեխնիկա չունենալու պատճառով, մրցույթում որևէ մեկը չի շահել: Ընդգծեմ, քաղաքացիները ևս իմանան, որ դա կարևորագույն ծրագիր է և եթե 1%-ով կանխարգելի կամ ավելի վաղ շրջանում բացահայտի թոքի քաղցկեղը, մենք կհամարենք, որ ահռելի գործ ենք արել: Ես նայել եմ, ըստ էության, ծրագիրը կոպեկներ է պահանջում: Արդյոք այս տարի ևս կհայտարարվի մրցույթ կամ առողջապահական ոլորտում ներառվա՞ծ է լինելու այդ ծրագիրը:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

Սերգեյ Հարությունյան

-Տիկին Վարդանյան, ոչ թե չունենալով տեխնիկա, այլ պարզապես այն ընկերություններն, որոնք ունեն այդ տեխնիկան, ինչ-ինչ պատճառով կամ երևի ֆինանսական առումով առաջարկն ոչ շահավետ են համարել, որովհետև գիտեք ծրագրում դրվում է մեկնարկային գին: Հնարավոր է այլ պատճառներով չեն մասնակցել և չի կայացել, որը նորմալ է: Մենք տարվա ընթացքում մեր գործընկերների և առողջապահական հիմնարկների հետ անվճար տարբերակով տարբեր ծրագրեր ենք փորձում իրականացնել՝ թե կոնսուլտացիոն, թե վերապատրաստման: Լինում են ծրագրեր, որ իրականացվում են, որը շատ ուրախալի է, լինում են դեպքեր, որ որոշակի տեխնիկական պատճառներով չեն իրականացվում:

Նշեմ որ այդ ծրագիրը, որն ուզում էինք իրականացնել, որոշ ոլորտային մասնագետների կողմից միանշանակ չէր ընդունվում: Բոլորը պահանջում, ասում էին, որ այդ ծրագիրը, որ ուզում եք իրականացնել, դա կատեի կամ յամերի ցածր չափաբաժնի տարբերակն է, այդ նկարը մոտավորապես 160000-180000 դրամ է, բնականաբար, այդ տարբերակով դա թույլ տալ չէինք կարող, որովհետև այդ բյուջեն չկա:

Այն տարբերակը, որը զուտ պրոֆիլակտիկ տարբերակով ցանկանում էինք անել, այո, մրցույթը չկայացավ, դրա պատճառով այս տարի դրված չէ: Այս տարի ուղղվածությունը լինելու է հիմնականում սիրտ-անոթային հիվանդությունների ուղղությամբ: Այդ ուղղությամբ նաև այն բյուջեն, որ հաստատել եք դուք: Նախատեսվում է սիրտ-անոթային հետազոտությունների սոնոգրաֆիկ սարքավորումների ձեռքբերում: Կարող եմ ասել, որ զգալի աշխատանք է կատարվել, այն բուժհաստատություններում, որոնց նախատեսվում է դրանք տրամադրել, աշխատակիցներն արդեն վերապատրաստվել են: Մրցույթը, որ կայանա և ձեռքբերվեն սարքավորումները, բավականին կբարելավվի սրտային հիվանդությունների դեմ նախնական ախտորոշումը և տրոպոնին սարքի գնման արդյունքում քաղաքացիները կստանան վաղ ախտորոշում:

Շնորհակալություն հարցի համար և շնորհակալ եմ, որ ուշադիր եք նմանատիպ սկրինինգային ծրագրերին, որովհետև ինքս որպես քաղաքացի և որպես պատասխանատու, համարում եմ, որ սկրինինգային ծրագրերը շատ կարևոր են: Ի վերջո, պետք է փորձենք ամեն ինչ անել, որպեսզի հիվանդությունները վաղ հայտնաբերվեն, ինչպես նաև քաղաքացիների ենթամշակույթի մեջ մտնի, որ ժամանակին ստուգվելը և առաջնային օղակ՝ պոլիկլինիկա դիմելը, բերում է ապագայում բարդացած հիվանդություններից խուսափելուն:

Թեհմինա Վարդանյան

-Շնորհակալություն, պարոն Բաբինյանը բյուջեի քննարկումից առաջ մեզ ներկայացրել էր ինչ անելիքներ կան այս տարի առողջապահական ծրագրերի հետ կապված: Այնուամենայնիվ, գտնում եմ, որ եթե հնարավոր լինի, քաղաքապետարանի կամ ենթակա հիմնարկների միջամտությամբ, հիմնական շեշտը պետք է դրվի քաղցկեղի վրա: Համեմատության կարգով կարելի է ասել, որ սրտի հետ կապված խնդիրները քաղաքացիների մոտ այսօր երկրորդային են, որովհետև քաղցկեղով տառապող հիվանդներն անասելի շատ են, որի հիմքում ընկած է ուշ ախտորոշումը:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Մարկոս Հարությունյան, խնդրեմ:

Մարկոս Հարությունյան

-Շնորհակալություն, անկեղծ ասած, այս հարցին չէի անդրադառնա, եթե մեկ շաբաթ առաջ հեռուստատեսությամբ չտեղեկանայի, կարելի է ասել, ապօրինության մասին: Մասնավորապես, Ավան վարչական շրջանում ինքնակամ շինություն էին ցանկանում քանդել, որի սեփականատերերն ասում էին, որ այդ հարցը բողոքարկված է դատարան, իսկ Ավան վարչական շրջանի ղեկավարի տեղակալն ասում էր, ոչինչ քանդենք, դուք գնացեք

բողոքարկեք: Դա օրենքի կոպիտ խախտում է: Ես չեմ ցանկանում անդրադառնալ կոնկրետ այս հարցին, կխոսենք այս հարցից ավելի գլոբալ:

Պարոն քաղաքապետ, ավագանու անցած նիստի ժամանակ Դուք ինձ հավաստիացրեցիք, որ ՀՀ կառավարության հ. 912-Ն որոշումն ներկայացրել եք չեղարկման, սակայն մինչ օրս այն չեղարկված չէ: Ասեմ ավելին, այդ որոշումը Ձեր պաշտոնավարումից մինչ օրս գործում է: Կա նաև օրենքի կետ, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ դրույթը հստակ ասում է, թե կոնկրետ, որ ինքնակամ շինություններն են օրինականացման ենթակա:

Անկեղծ ասած, ես հասկանում եմ, որ քաղաքապետի պաշտոնը, հատկապես Երևանի քաղաքապետի պաշտոնը, Հայաստանի Հանրապետությունում շատ բարձր և լուրջ պաշտոն է, սակայն օրենքից բարձր ոչինչ գոյություն չունի Հայաստանի Հանրապետությունում: Ինչ է ստացվում, որ Դուք մեկ տարի ու կես է քաղաքապետ եք և այս օրենքները, ՀՀ կառավարության որոշումները չեք կիրառել, ինչի արդյունքում ականատես ենք լինում նման տգեղ տեսարանների: Անկեղծ եմ ասում, ովքեր հեռուստատեսությամբ տեսել են այդ հաղորդումը, համոզված եմ ինձ հետ համակարծիք կլինեն: Առաջին հերթին ինձ այս հարցն է հետաքրքրում:

Երկրորդը՝ երեկ Արմեն Նեսիսյանի հետ ներկա գտնվեցինք Հարավարևմտյան Բ4 թաղամասում, որտեղ ավտոտնակների քանդման աշխատանքներն էին իրականացվում: Ի զարմանս ինձ տեղեկացա, որ բնակիչներին փոխհատուցել էին և ինչպես իրենք են ասում, իրենց սրտով են փոխհատուցել: Այս ամենից մի հարց է ծագում պարոն քաղաքապետ. նախորդ նիստին, որ Ձեզ հարց տվեցի ինչն է պատճառը, որ չենք օրինականացնում, եթե կսխալվեմ, ինձ ուղղեք, Դուք պատասխանեցիք, որ եթե համայնքը մի օր, ինչ-որ մի տեղ ծրագիր իրականացնի, ապա բոլոր այն տարածքները, որոնք ունեն սեփականության վկայական, մենք փոխհատուցելու ենք, որոնք չունեն, չենք փոխհատուցելու, համայնքը վնաս չի կրելու: Ինչպե՞ս հասկանանք, որ այս տարածքների համար փոխհատուցում է տրվել:

Ես իրավաբան չեմ, բայց խորհրդակցել եմ իրավաբանի հետ, ինձ մի պարզ բան են ասել, եթե քաղաքապետարանն ունի նախադեպային ինչ-որ մի որոշում, կապ չունի, թե որ թվականին է այդ որոշումը կայացվել, չի կարող մեկ այլ սուբյեկտի դեպքում չփոխհատուցել: Այսինքն, եթե նախկինում քաղաքապետարանն ինչ-որ մի անօրինական կառույցի ապամոնտաժման համար փոխհատուցում է տվել, ապա մյուս դեպքերում ևս, պարոն քաղաքապետ, պետք է պարտադիր փոխհատուցում տաք, նոր քանդեք: Քանի որ դա Ձեր ցանկությամբ չի արվում, այլ նախադեպն արդեն կա քաղաքապետարանում: Սա շատ բարդ հարց է և բերում է փակուղի:

Հայկ Մարության

-Փոխհատուցումների հետ կապված, միգուցե, իրավաբանները կարող են մանրամասնել: Այդպիսի բան չեմ պատկերացնում, ինչպես կարող է, եթե մի տեղ փոխհատուցել ես, մյուս դեպքում իրավունք չունես չփոխհատուցել: Մեր բոլոր գործառույթները և գործողություններն իրականացվում են օրենքի համաձայն, եթե օրենքով այդպես է նախատեսված, պետք է այդպես էլ լինի: Ինչ վերաբերում է ՀՀ կառավարության հ. 912-Ն որոշման կիրառմանը, այո, իհարկե, օրենքից բարձր ոչ ոք չկա, եթե որևէ մեկն օրենքը խախտում է, պետք է դրա համար պատասխանատվություն կրի: Այսինքն, եթե օրենքը խախտի քաղաքապետը կամ որևէ պաշտոնյա, ապա պետք է պատասխանատվություն կրի:

Ես վստահաբար գիտակցում եմ իմ լիազորությունները, իմ անելիքները, և եթե ես որևէ բան այնպես չանեմ, դրա պատասխանը պետք է տամ, իսկ այն որ մենք մինչ օրս գործում ենք միայն օրենքի սահմաններում, այո, դա այդպես է: Անցյալ անգամ պարոն Աղաբեկյանը նույնիսկ թիվ հնչեցրեց, թե կիրառելով ՀՀ կառավարության հ. 912-Ն որոշումը քանի օբյեկտ ենք սեփականաշնորհել: Մոտավորապես 500% է կազմել, այսինքն նախորդ տարվա համեմատությամբ 5 անգամ ավել, տարբեր կետերով, տարբեր տեղերում, տարբեր կառուցապատողների ապօրինի, ինքնակամ շինությունների վերաբերյալ այս որոշումը կիրառվել է և դրանք օրինականացվել են: Կարծում եմ այս թիվն ամեն ինչի մասին խոսում է:

Այո, կան նաև տարբերակներ, որտեղ քաղաքային իշխանությունն, այնուամենայնիվ, դադար է տալիս, որպեսզի հասկանա ինչ ծրագիր պետք է այդտեղ լինի, որ հասկանա ինչ ճանապարհով գնա: Եթե կանաչապատ տարածքի կամ մայթի վրա ինչ-որ ինքնակամ շինություն է եղել, կներեք, չեմ շտապելու կիրառել ՀՀ կառավարության հ. 912-Ն որոշումը, այլ պետք է հասկանանք ինչ է այդտեղ կատարվում: Եթե դրա համար ես կամ որևէ վարչության պետ պետք է պատասխանատվություն կրենք, խնդիր չկա:

Ամենամեծ պատասխանատվությունը մենք ունենք ժողովրդի առջև. ժողովուրդը շատ պարզ, հստակ մեր առջև խնդիր է դրել, որ կանաչապատ տարածքները, մայթերը պետք է ազատվեն:

Մարկոս Հարությունյան

-Ես այս քաղաքի թշնամին չեմ, առավել ևս Ձեր թշնամին էլ չեմ, բայց եթե օրենք կամ կառավարության որոշում եք կիրառում, ապա կիրառեք այնպես, ինչպես որ կա: Պատահական չասեցի, որ կառավարության հ. 912-Ն որոշումն ամբողջությամբ հղված է Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետին: Ամեն դեպքում օրենքի մեջ նման դրույթ չկա, որ քաղաքապետը որոշի, եթե սեփական տներ կամ սեփական հողատարածքում գտնվող ինքնակամ շինություններ են, դրանք թույլատրվում են սեփականաշնորհել, իսկ եթե

համայնքային հողի վրա են կառուցված՝ դրանք չեն թույլատրվում: Եթե օրենքում նման բան ինձ ցույց տաք, իմ այս խոսքերի համար ներողություն կխնդրեմ:

Ամեն դեպքում, ասելիքս ինչումն է կայանում, հատկապես նիստին ներկա են նաև իրավաբաններ, կփաստեն ասածս, որովհետև ես բազմաթիվ իրավաբանների հետ խոսել եմ այս մասին: Տեսեք, պարոն քաղաքապետ, եթե ինչ-որ մի շինություն կա համայնքային հողի վրա, որը ՀՀ կառավարության հ. 912-Ն որոշման հիման վրա թեկուզ 2017թ. է սեփականաշնորհվել, այսօր եթե մենք դա չենք անում, օրենք ենք խախտում: Երկրորդը՝ եթե մենք հ. 912-Ն որոշման չեղարկման հայտ ենք ներկայացրել ՀՀ կառավարություն և այն չեղարկվում է, դա ամենևին այս իրավիճակից մեզ չի փրկում, որովհետև Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածը հստակ սահմանում է, թե որ օբյեկտներն են ենթակա սեփականաշնորհման: Այդ դեպքում պետք է այս օրենքն էլ փոխել, բայց դա էլ հարցի լուծում չէ, հարցը տանում է փակուղի: Անկախ նրանից, թե հետագայում մենք ինչ օրենք էլ ընդունենք, այն հետին ուժ չի ունենալու: Այնպես, որ ՀՀ կառավարությունը ինչ էլ որոշի, Դուք ինչ էլ մշակեք, Աստված թող ձեզ հաջողություն տա այդ հարցում, բայց չի կարող խստացնող օրենքը հետին ուժ ունենալ:

Այսինքն, մեր քաղաքում առկա այսքան անօրինական շինությունները պետք է մնան օդից կախված, այնքան ժամանակ մինչև համայնքը որոշի այդտեղ ծրագիր իրականացնել, ճի՞շտ եմ հասկանում: Մենք չենք կարողանալու բոլորը քանդել պարոն քաղաքապետ, որովհետև դա կլինի ոչ միայն Ձեր վերջը, դա կլինի այս դահլիճում գտնվող բոլորի վերջը: Մենք չենք կարող ողջ քաղաքին պատերազմ հայտարարել: Ես չգիտեմ Ձեզ ճիշտ են զեկուցում, թե ոչ. չկա Երևան քաղաքում մի վարչական շրջան, որտեղ 70%-ն ինքնակամ շինություն չլինի: Անկախ նրանից, թե դրանք կլինեն խանութի, ավտոտնակի, հյուրանոցի կամ տան տեսքով: Ես ցանկանում եմ, որ քաղաքի համար լավ լինի, որ քաղաքն այդ գաղջ մթնոլորտից վերջնականապես ազատվի: Հեղափոխությունից հետո քաղաքում չպետք է ունենանք մի հատ կետ, որտեղ կարող է լինել կոռուպցիոն ռիսկ: Նախկինում քաղաքապետարանի ամբողջ թալանն այս սխեմայի շուրջ է կառուցված եղել. ավարտական ակտեր, դրան գումարած ինքնակամ շինությունների օրինականացում: Ինչ է Դուք Ձեզնից հետո տեղ եք թողնում, ուրիշին չեմ ցանկանում մեղադրել, համարեք ես եմ ընտրվում քաղաքապետ, գամ թալանով ղբաղվեմ, տեղ ունենամ թալան անելու:

Հայկ Մարության

-Շնորհակալություն պարոն Հարությունյան, պարզապես ասեմ, որ եթե ինչ-որ տնտեսվարող սուբյեկտ կամ որևէ անհատ համաձայն չէ մեր որոշումների հետ, կարող է դիմել դատարան:

Մարկոս Հարությունյան

-Կոնկրետ տարածք գիտեմ, որ մերժել եք, չեք սեփականաշնորհել, այդ տարածքի տերը դատարանում հաղթել է, վճիռ ունի և սեփականաշնորհել է համայնքի հողի վրա կառուցած ինքնակամ շինությունը: Այսինքն, մենք բոլորին ուղղորդում ենք դատարան, դրանով որակազրկելով մեր կառույցը: Թող բոլորը դիմեն դատարան, պարզապես, որ մարդիկ դիմում են Ձեզ, խնդրում եմ մերժեք: Ոչ մերժում եք, ոչ թույլտվություն եք տալիս, օդի մեջ մնում է այդ տարածքը: Ասում են սպասեք մինչև կառավարությունից որոշումը կներկայացվի, ոչ հստակ ժամկետներ կան, այդ ժամկետների սահմաններում մերժեք, որ մարդկանց համար հիմք լինի, դիմեն դատարան: Անկախ ամեն ինչից, մի օր կգա, վստահ եմ, Դուք այս հարցի հետ կապված ինձ հետ հաստատ համաձայն եք լինելու:

Հայկ Մարության

-Շնորհակալություն պարոն Հարությունյան:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արմեն Կոտոլյան, խնդրեմ:

Արմեն Կոտոլյան

-Պարոն Մարության Ձեր բացակայության ժամանակ Լիլիթ Կիրակոսյանը ելույթ ունեցավ «Գոլդֆլոր» ՍՊ ընկերության կողմից ներմուծված մետաղական աղբամանների մասին: Այդ մետաղական աղբամանները հունվարի 9-ին բերվել է Հայաստան, սակայն Երևանի քաղաքապետարանի կոմունալ տնտեսություն վարչության կողմից ինչ-որ խոչընդոտներ կան և այդ ապրանքը քաղաքապետարանի կողմից չի ընդունվում: Մասնավորապես, հասցրեցի ճշտել 2 դեպք՝ առաջինը կոմունալ տնտեսության վարչությունն ուղարկել է տվյալ ընկերությանը, որպեսզի աղբամանները տանեն փորձաքննության, թե արդյոք մետաղը համապատասխանում է մրցույթի պահանջներին: Երկրորդը՝ դրանք արդեն ուղարկվել են չափագիտական փորձաքննության, թե արդյոք չափերը համապատասխան են, թե ոչ: Այդ փորձաքննությունների պատասխաններն ստանալուց հետո, կրկնակի փորձաքննության է ուղարկվել: Ի դեպ նշեմ, որ այս գործընթացի պատճառով տնտեսվարողն օրական 69.000 դրամ տույժ է կրում, գումարած բանկային վարկի իր տոկոսները:

Մինչ այժմ ունեցել ենք նմանատիպ մրցույթների հաղթողներ, ովքեր տարբեր ժամանակներում ներմուծել են տարբեր աղբամաններ, եթե ընթացակարգն այդպիսին է, որ պետք է լինեն նյութաբանական և չափագիտական փորձաքննություններ, արդյոք կոմունալ տնտեսության վարչությունն ունի այդ տնտեսվարողների կողմից բերված աղբամանների, թե՛ նյութագիտական, թե՛ չափագիտական փորձաքննությունների պատասխանները: Հակառակ դեպքում ստացվում է կոնկրետ այս ընկերության դեմ կա ինչ-որ միտում՝ չընդունելու այս

ապրանքները: Խնդրում եմ, եթե կան այդ փորձաքննությունների բոլոր պատասխանները, որ մինչ «Գոլդֆլոր» ՍՊ ընկերությունը, ներմուծողները տրամադրել են, թող ներկայացնեն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն պարոն Կոտոլյան, քանի որ խնդրին ծանոթ եմ, կարող եմ Ձեզ միանգամից պատասխանել: Բացառվում է, որ որևէ մի ընկերության հանդեպ յուրահատուկ վերաբերմունք լինի՝ թե լավ, թե վատ առումով: Իմ կողմից կոնկրետ հանձնարարական է տրվել, որ այսուհետ բոլոր աղբամանները, որոնք մենք ընդունելու ենք, պետք է անցնեն այդ փորձաքննությունը: Փորձաքննությունն անցնելու են ոչ միայն այդ երկաթից, այլ բոլոր աղբամանները: Մենք պետք է աղբամաններ ստանանք սերբական ընկերությունից, որը նույնպես պետք է փորձաքննությունն անցի, ինչպես նաև լեհական ընկերությունից, որը մինչև այդ էլ էինք ստանում: Բոլոր աղբամանները պարտադիր փորձաքննություն պետք է անցնեն, որպեսզի մենք համոզված լինենք, որ մեզ մատակարարում են այն աղբամանները, որոնք մենք պատվիրել ենք:

Այդ ընկերության հանդեպ, եթե բացասական իմաստով յուրահատուկ վերաբերմունք լիներ, մենք կարող ենք ուղղակի չընդունել այդ աղբամանները և սև ցուցակ գցել իրենց, քանի որ այդ ընկերությունն ուշացրել է իր ապրանքի մատակարարումը: Ուստի, եթե այդպիսի բան չի արվել, նշանակում է, որ ոչ մի յուրահատուկ վերաբերմունք չկա: Ասեմ ավելին, որ իմ կողմից եղել է հանձնարարական, որ բոլոր աղբամանները պետք է ստուգվեն:

Պարոն Արեյան այս պահին 3 ընկերություն է չէ՞, որ պետք է ստուգվեն:

Կամո Արեյան

-Այո, փորձաքննության ներկայացվելու են այդ ընկերության ոչ միայն մետաղական, այլև մյուս պոլիէթիլենային աղբարկղները: Ինչպես հաստատեց պարոն քաղաքապետն այս ընկերության հանդեպ որևէ միտում չկա և չի էլ կարող լինել:

Արմեն Կոտոլյան

-Բարի, պարոն քաղաքապետ ժամկետների ուշացման համար նշեմ, որ դեկտեմբերի 23-ի կամ 25-ի փոխարեն, ապրանքը մատակարարվել է հունվարի 9-ին և տեղեկանք է տրվել, որ ֆորսմաժորային իրավիճակի՝ փոթորկի պատճառով է այդ ապրանքն ուշացել:

Հայկ Մարության

-Ես հասկանում եմ Ձեզ, չնայած չգիտեմ այդ հարցն օրենսդրությամբ ինչպես է կարգավորվում՝ պետք է այդ պատճառը հաշվի առնել, թե ոչ: Այնուամենայնիվ, այսօր մեզ մոտ լուրջ խնդիրներ կան կապված ՀՀ ֆինանսների նախարարության հետ:

Այս մասին ավելի մանրամասն կներկայացնի պարոն Հարությունյանը, խնդրե՛մ:

Սերգեյ Հարությունյան

-Քանի որ պարոն Սարգսյանի բացակայության ժամանակ ես երեկ կատարում էի իր լիազորությունները, թույլ տվեք կոնկրետ այս հարցին ես արձագանքեմ: Երեկ, վերջապես, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պարզաբանում ստացվեց, որովհետև մինչ այդ ստացված գրությամբ նշվել էր, որ խնդիրը տարին փոխվելու մեջ է: Քիչ առաջ, որ դուք քվեարկեցիք այդ գումարի փոփոխության համար, այդ ամբողջն արվում էր նրա համար, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հստակ դիրքորոշում, որ այո կարող եք վճարել կամ ոչ չեք կարող վճարել, չէր գալիս, որովհետև տարընկալման հարց կար: Երեկ ինձ մոտ համապատասխան վարչությունների ղեկավարների հետ ժողով արեցինք, կապվեցինք ՀՀ ֆինանսների նախարարության հետ և ստացանք պարզաբանում, որ կիրառելով համապատասխան մեթոդաբանությունը, կարող ենք վճարում կատարել:

Պարոն Կոտոլյան, հավատացեք, այս ընկերության հանդեպ որևէ միտում չկա:

Արմեն Կոտոլյան

-Շատ լավ, եթե այդ մարդկանց ապրանքը քաղաքապետարանն ընդունի, քանի՞ ամիս պետք է մնա պահեստներում, քանի՞ ամիս իրենք պետք է տույժեր, տուգանքներ վճարեն:

Հայկ Մարության

-Պարոն Կոտոլյան, եթե ապրանքը հասներ մինչև Նոր տարի և նորմալ մատակարարվեր, ապա այն ժամանակին կընդունվեր, իրենք իրենց գումարը վճարած կլինեին, ամեն ինչ տրված կլիներ: Ասեմ ավելին, եթե դա իմ ուշադրությունը չգրավեր, կարող էի չհանձնարարել, որ դրանք ստուգվեն նոր ընդունվեն, առանց ստուգելու կընդունեինք, ինչպես արվել էր մինչև այսօր: Ներկայումս ինչ-որ կատարվում է, դա առաջին անգամ է: Տեխնիկական բնութագրերը համապատասխան վարչությունների կողմից գրվում են առաջին անգամ, ոչ թե արդեն նախօրոք որոշված հաղթողների կողմից:

Մեր վարչությունները լուրջ խնդիրներ ունեն, որովհետև իրենք երբևիցե տեխնիկական բնութագիր չեն գրել: Գալիս էր հաղթող ընկերությունը, որի հետ պայմանավորվածություն կար, որ պետք է հաղթի, տալիս էր տեխնիկական բնութագիրը գնումների վարչությանը, վերջինս էլ դնում էր տենդերի: Եվ նա ով պետք է հաղթեր, գալիս հաղթում էր: Մենք զրոյից սկսել ենք գրել տեխնիկական բնութագիր, զրոյից սկսել ենք սովորել, թե ինչպես են ընդունում ապրանքը: Ես անձամբ եմ ստուգել սերբական այդ պոլիէթիլենային աղբամանները, որովհետև այնտեղ այլ խնդիրներ էլ կային կապված կիլոգրամների հետ: Նկատեցի, որ կան խնդիրներ, հանձնարարեցի, որ լուծեն դրանք և աղբամաններն անցնեն փորձաքննություն: Այդ ժամանակ աշխատակիցներից մեկն ինձ ասաց, որ մետաղական աղբամանների վրա ժանգ են նկատել: Հանձնարարեցի, որ դա

նույնպես փորձաքննություն անցնի: Ընդհանրապես ասել եմ, երբ մեծ քանակությամբ ապրանք ենք ընդունում, որը երկար տարիներ պետք է օգտագործենք, դրանք պետք է փորձաքննություն անցնեն: Նշեմ, որ համաշխարհային ստանդարտներով պոլիէթիլենային աղբամանների շահագործումը 4 տարի է, մետաղականներինը՝ 8: Ես չգիտեմ մենք ինչքան կօգտագործենք աղբամանները, որովհետև դա պայմանավորված է կլիմայի առանձնահատկություններով: Ամեն ինչ անում ենք առաջին անգամ, մյուս անգամ թե՛ մենք, թե՛ տնտեսվարողը կիմանանք, որ իրականացվելու է փորձաքննություն:

Արմեն Կոտոլյան

-Կա՞ ժամկետ, որ քաղաքապետարանն առավելագույնը երեք ամսում պետք է այդ ապրանքն ընդունի կամ չընդունի:

Հայկ Մարության

-Այս հարցին ավելի հստակ կպատասխանի գնումների վարչության պետ Էդգար Կիրակոսյանը, խնդրե՛մ:

Էդգար Կիրակոսյան

-Հանձման-ընդունման արձանագրությունը Երևանի քաղաքապետարան մուտք լինելուց հետո 10-օրյա ժամկետում ապրանքը պետք է ընդունվի կամ մերժվի: Հակառակ դեպքում համարվում է ընդունված: Այս պահին, քանի դեռ փորձաքննություն չկա, հանձման-ընդունման մասին խոսք լինել չի կարող:

Հայկ Մարության

-Շնորհակալություն: Օգտվելով առիթից ցանկանում եմ դիմել բոլոր տնտեսվարողներին, որ բոլոր այն ապրանքները, որոնք հնարավոր է ենթարկել փորձաքննության, դա իրականացնելու ենք:

Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Արմեն Ներսիսյան:

Արմեն Ներսիսյան

-Պարոն քաղաքապետ, երեկ Մարկոս Հարությունյանի հետ այցելել ենք Հարավարևմտյան Բ-4 թաղամաս և տեսել ենք սարսափահար բնակիչների, ովքեր սթրեսի էին ենթարկվել, երբ իմացել էին, որ հյուսիս-հարավ ճանապարհն անցնելու է շենքերին շատ մոտ: Հրաչյա Սարգսյանը վերջում ասել է, որ կտեսնենք այս հարցն ինչպես է արվում: Ավելի լավ չէր լինի բնակիչներին առաջարկել այլընտրանքային տարբերակ կամ ինչ-որ այլ տարբերակ մտածենք և մարդկանց սթրեսի մեջ չպահենք: Չենք կարող մոռանալ Սարալանջի փողոցում ինչքան վթարներ եղան և ինչքան մարդիկ մահացան: Այս ամեն ինչը տեսնելով, երևանցին վերհիշում է այդ պատմությունները: Դրա հետ մեկտեղ մարդիկ սարսափած

հիշում էին նմանատիպ դեպքեր տարբեր փողոցներում և մտահոգվում էին, որ իրենց երեխաների կամ մեծահասակ ծնողների հետ նույնպես կարող է նման դեպք պատահել:

Հայկ Մարության

-Շնորհակալ եմ, նախ ինձ համար տարօրինակ է, որ երեկ մարդիկ զարմացել էին, որովհետև, եթե չեմ սխալվում, իրենք արդեն երեք տարի տեղյակ են, որ դա պետք է տեղի ունենա, համաձայնվել էին փոխհատուցումներին: Այսինքն, սրա մասին նոր չէ, որ իրենք տեղեկացել են, ասեմ ավելին՝ իրենք համաձայն են եղել այս ամենին, բայց հիմա ինչ-որ նոր թափ են հավաքել: Ես ոչ մեկին չեմ ուզում մեղադրել, բայց իմ պաշտոնավարության ժամանակ, եղել են շատ դեպքեր, որ մարդիկ փորձել են հնարավորության դեպքում հավելյալ գումարային դիվիդենտներ քաղել այս կամ այն շինարարությունից: Իմ պրակտիկայում արդեն քիչ չեն այս դեպքերը:

Երկրորդը՝ չհասկացա Սարալանջի փողոցի և այս ճանապարհի հետ կապը, եթե այն փոքր, նեղ ճանապարհի մասին եք ասում, երևի դրա մասին եք ասում, իսկ եթե մեծ ճանապարհի մասին եք ասում, ապա սա մեծ ճանապարհ է լինելու: Սարալանջի մեծ ճանապարհն այս պահին համարվում է քաղաքի բեռնաթափման համար կարևորագույն ճանապարհներից մեկը: Սա նույնպես լինելու է բեռնաթափման համար լավագույն ճանապարհներից մեկը: Եթե պատկերացնենք, որ հայկական կողմը չցանկանա նախագիծը համապատասխանեցնել միջազգային բոլոր նորմերին, ապա ADB բանկը միջազգային ընթացակարգերով իրականացնելու է բոլոր այդ գործընթացները: Սկսած փոխհատուցումներից, ճանապարհային երթևեկության և անվտանգության կանոններից, բոլորն անցնում են միջազգային փորձաքննություններ: Այստեղ ոչ մի խնդիր չկա, երբ խոսք էր գնում ճանապարհի մասին, անձամբ, պարոն Մեսչյանի հետ բնակիչներին երկու անգամ ընդունել ենք քաղաքապետարանում: 3-4 ժամ տևողությամբ քննարկում է եղել, լսել ենք բոլոր խնդիրները և եղած իրավիճակում տվել ենք լավագույն լուծումները: Ճանապարհն ինչ-որ մի տեղով պետք է անցի, եթե այլ տեղով անցնի, ապա այդտեղի բնակիչները կբողոքեն: Ես քաղաքացիներին օրինակ եմ բերել Կոմիտասի, Մաշտոցի, Արշակունյաց պողոտաները և Կիևյան փողոցը, որտեղ շենքերը գտնվում են փողոցին մոտ և աղմուկ է: Սա քաղաք է և շարժում պետք է լինի: Հիմա այդ ճանապարհը պետք է լինի, մոտ 900000 դոլարով թանկացավ պրոյեկտը միայն նրա համար, որ բոլոր կետերը, որոնք նշեցին այդ քաղաքացիները, ստացել ենք: Պարոն Մեսչյանն անձամբ է հետևել այդ ամենին:

Ցանկանում եմ հասկանալ, սրանից առավել ի՞նչ կարելի է անել, հրաժարվե՞նք այդ ճանապարհից: Կներեք, այստեղ գերակա շահ կոչվածը սրա մասին է, երբ որ 1000000 մարդ պահանջում է մի բան լինի, բնականաբար, սա ինչ-որ ձևով խանգարելու է 300 կամ 400

մարդու: Սա փողոցային առևտրի պատմությունն է՝ փողոցային առևտուր իրականացնող մարդիկ բողոքում էին փողոցային առևտուրն արգելելու համար: Այսինքն, երբ փողոցային առևտուրը վերացնում ենք, դա գոհացնում է 1000000 մարդու, բայց դժգոհ է 1000 մարդ: Մեր անելիքն այն է, որ մեծամասնությանը մեր գործողությունը պետք է օգտակար լինի և առնվազն 10, 20, 300, 1000 հոգու պետք է խանգարի, ուրիշ տարբերակ չկա:

Արմեն Ներսիսյան

-Սարալանջի փողոցը նշելով, նկատի ունեմ Սարի թաղի հատվածը, որտեղ կարծեմ ավտովթարից երեխաներ մահացան: Այդտեղ ասֆալտապատում իրականացվեց, բարձրություն տեղադրվեց, որ մեքենաները դանդաղեցնեն արագությունը, այսինքն սկզբում մարդիկ մահանում են, հետո միջոցառումներ են կիրառվում: Երկրորդը՝ ավելի վատ է, որ երեք տարի է մարդիկ սթրեսի մեջ են, եթե Դուք այդ տարածքում չեք եղել, մենք երեկ այցելել ենք և տեսել ենք, որ գնացքի գծերից այն կողմ ճանապարհ կա, որ հնարավոր է ուղիղ միանալ այդ ճանապարհին: Ինչու՞ ճանապարհը չի կառուցվում այդ ուղղությամբ, ինչու՞ պետք է այդ արագընթաց ճանապարհն անցնի բնակելի շենքերի մոտից:

Երկրորդ հարցս հնչեցնեմ: Վարդաշենի հ.66/1 և հ.68/1 շենքերի մասին բազմիցս ասել եմ: Պատկերացնում եք այդ շենքում 180 երեխա է ապրում, ավագանու անդամներն այդտեղ չեն գնում, այդ մարդկանց հետ ոչ ոք չի զրուցում, չեն ցանկանում տեսնել այդ մարդիկ խոնավության մեջ ինչպես են ապրում: Չնայած պետք է ասեմ, որ Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Արման Աբրահամյանին ու քաղաքապետարանի շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանին անձամբ եմ խնդրել: Նրանք տարբեր հարցերի շուրջ աջակցել են: Դուք քարոզարշավի ժամանակ խոստացել եք, որ անձամբ կգնաք և ամեն ինչ կտեսնեք: Պարոն քաղաքապետ երբ ե՞ք գնալու երևանցիների հետ զրուցելու:

Հայկ Մարության

-Շնորհակալ եմ, որ Դուք այցելում եք, բայց եթե պարոն Աբրահամյանը և պարոն Հարությունյանն այցելել են, դա նշանակում է ես եմ այցելել: Բոլոր վարչական շրջաններում կան ղեկավարներ, քաղաքապետը չի կարող ամեն տեղ գնալ: Նրանք գնում են, տեսնում են, հարցերին լուծում են տալիս, կամ խնդիրը հասկանում են և զեկուցում են ինձ: Սա է համակարգը, որ աշխատում է, աշխարհում հորինված այլ համակարգ չկա:

Մենք ունենք 30000 աշխատող, բոլորին ազատենք և ես մենակ բոլորի փոխարեն աշխատե՞մ, այդպես չի լինում: Ես բոլոր խնդիրներին տեղյակ եմ, չշփոթենք, սա Երևանի քաղաքապետարանն է և այն պետք է գործի իր լիազորությունների սահմաններում: Ասեմ ավելին, այն շենքերը, որ մենք կառուցում ենք, մեր լիազորություններից դուրս է,

կամավորական սկզբունքով է սա արվում, նման պարտականություն չունենք, բյուջե էլ չունենք, եթե բյուջե ունենայինք, ապա կանեինք:

Ես դիմել եմ ՀՀ կառավարություն, որ այս տարի նախաձեռնում ենք շենք կառուցել, որի համար մոտ 2 միլիարդ գումար է անհրաժեշտ, բայց կառավարությունը մերժել է: ՀՀ կառավարության կարծիքով այս պահին տարբեր քաղաքներում ավելի կարևոր խնդիրներ կան: Դրա համար մենք սկսել ենք այդ գումարը հայթայթել, որ այդ շենքը կառուցենք: Սա նույնպես մեր լիազորություններից դուրս է, բայց կամավորության սկզբունքով անում ենք, քանի որ մտածում ենք երևանցիների մասին: Շենքը կառուցելով լուծվում է այդ տիպի խնդիրներ ունեցող 1% կամ 2% մարդկանց հարցը, դա չի նշանակում, որ խնդիրը լուծում է ստանալու, այդ խնդիրը գլոբալ է:

Պարոն Ներսիսյան, ամեն անգամ ասել, որ այդ խնդիրը կա և պետք է մտածել դրա մասին, դրանով խնդիրը չի լուծվում: Դուք գնում եք և տեսնում եք, դա շատ լավ է, բայց հետո այդ խնդրի լուծման համար Ձեր կողմից ի՞նչ է արվում: Անկեղծ չեմ հասկանում, եթե կարող եք օգնել, գումար հայթայթել, մեծ հաճույքով, մենք կկառուցապատենք:

Արմեն Ներսիսյան

-Ձեր քարոզարշավի ժամանակ ես չեմ ասել, որ կառուցելու ենք, Դուք եք ասել: Կարծում եմ Ձեր խոսքերին պետք է հետևողական լինեք:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, երբևիցե իմ քարոզարշավի ժամանակ խոսք չի եղել, որ մենք կառուցելու ենք սոցիալական շենքեր և տրամադրելու ենք քաղաքացիներին, որովհետև դա մեր լիազորությունների մեջ չէ: Ես ինչպես կարող եմ խոսք տալ մի բան, որը մեր լիազորությունների մեջ չէ: Դրա համար բյուջե նախատեսված չէ, այդպիսի կետ բյուջեում չի կարող լինել:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյան, խնդրեմ:

Արման Անտոնյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Դուք նշեցիք, որ քաղաքապետարանն իր բոլոր լծակներով, կազմակերպություններով, կառույցներով ավելի քան 30 հազար աշխատակից ունի, հարյուրավոր ՓԲԸ-ներ, ՀՈԱԿ-ներ և այլն: Ողջ գործընթացը վերահսկելու և ֆինանսներն արդյունավետ ծախսելու համար կարևորում եմ երկու ենթակառույցների աշխատանքը, այն է՝ վերահսկողության վարչության և ներքին աուդիտի բաժնի: Ինձ համար այս երկու կառույցները շատ կարևոր են Երևան համայնքի ֆինանսական ռեսուրսները ճիշտ օգտագործելու համար: Կարծես թե 2019թ. արդեն ամփոփել ենք կատարողականի տեսքով, սակայն կխնդրեմ այս երկու կառույցների ղեկավարների կողմից այսօր այստեղ հնչեցվի

հաշվետվության նման մի բան, թե մենք ի՞նչ արդյունքներ ենք ստացել, կամ ի՞նչ խախտումներ ենք արձանագրել, դրանց ի՞նչ լուծումներ են տրվել: Ես գիտեմ, որ սա շատ համապարփակ թեմա է, բայց կխնդրեմ հնարավորինս կոնկրետ պատասխանել:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, պարոն Անտոնյան, ուղղակի ես խնդրում եմ ավագանու բոլոր անդամներին նման հարցերի դեպքում նախապես տեղեկացնել տվյալ վարչության պետին, որպեսզի նա նիստին ներկայանա ավելի պատրաստված, տեղեկանքով: Ներքին աուդիտի բաժնի նորանշանակ պետն այսօր ներկա չէ, նման դեպքում նրան պետք էր հրավիրել, իսկ հարցին իր մասով կպատասխանի վերահսկողության վարչության պետ Արթուր Ավետիսյանը, խնդրեմ:

Արթուր Ավետիսյան

-Շնորհակալություն հարցի համար, հարցը, իսկապես շատ ծավալուն պատասխան է պահանջում: Վերահսկողության վարչությունն իր գործառույթների շրջանակներում 2019թ. քաղաքապետի կարգադրությամբ կատարել է որոշ հիմնարկությունների, կազմակերպությունների ֆինանսական գործունեության ուսումնասիրություն, կազմվել են ամփոփ տեղեկանքներ, կայացվել են տարբեր որոշումներ: Ձեռք բերված այն նյութերը, որոնք իրենց բովանդակության մեջ պարունակել են հանցագործության վերաբերյալ տեղեկություններ՝ փոխանցվել են իրավապահ մարմիններին: Եղել են դեպքեր, որ հիմնարկ-ձեռնարկություններին ներկայացվել է կոնկրետ առաջարկություն տեղ գտած թերությունները շտկելու, վերացնելու և ճիշտ աշխատելու առումով: Եղել են նաև տարբեր հանձնարարություններ քաղաքապետի կողմից, որոնք նույնպես ամփոփվել են: Վարչությունն իր գործառույթների սահմաններում աշխատանքներ է իրականացրել կապված թեժ գծով ստացված ահազանգերի հետ, հետադարձ կապ է պահպանել ահազանգող բոլոր քաղաքացիների հետ: Թեժ գծով ստացած ահազանգերի հետ կապված ուսումնասիրություն-ստուգումներ է կատարել նաև ենթակա ստորաբաժանումներում, վարչական շրջաններում՝ ուշադրություն դարձնելով օբյեկտիվ, օպերատիվ և բազմակողմանի լուծումներ տալու հանգամանքներին: Այս պահին թվային տվյալներ ներկայացնել չեմ կարող:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, պարոն Ավետիսյան, խնդրեմ պարոն Անտոնյան, երկրորդ հարցը:

Արման Անտոնյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Այս հարցը, կարծում եմ, կհետաքրքրի ավագանու յուրաքանչյուր անդամին, ուստի Ձեր թույլտվությամբ կխնդրեմ

վերահսկողության վարչության և ներքին աուդիտի բաժնի կողմից պատրաստվի և մեզ տրամադրվի ամփոփ փաստաթուղթ, որպեսզի մենք հասկանանք, թե ինչեր է բացահայտվել և ինչեր է արվել:

Հայկ Մարության

-Պարոն Սարգսյան, խնդրում եմ հանձնարարել վերահսկողության վարչության և ներքին աուդիտի բաժնի պետերին՝ պատրաստել այդ փաստաթղթերը:

Արման Անտոնյան

-Շնորհակալություն, երկրորդ հարցս հետևյալն է. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի վարչական շենքի հարևանությամբ կա Հայրենական մեծ պատերազմի 40-ամյակին նվիրված մի գեղեցիկ զբոսայգի, որն այժմ գտնվում է ահավոր վիճակում: Ի՞նչ հնարավորություններ կան փուլային տարբերակով այգին կարգի բերելու, այնտեղ գտնվող պատմամշակութային կոթողներ հանդիսացող հուշարձանները վերանորոգելու համար:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Դավիթ Կարապետյանը, խնդրեմ:

Դավիթ Կարապետյան

-Շնորհակալություն, նախ ասեմ, որ երեք տարի առաջ նախագիծ է կազմվել, նախահաշվային գումարը կազմել է 600 մլն դրամից մի փոքր ավել: Այգու հուշարձանները և շատրվանների համակարգը ենթակա չեն վերանորոգման, այլ պետք է նորից կառուցվեն: Այգին ներկայումս խնամվում է և ծառերը չեն չորանում, սակայն իր նպատակին չի ծառայում:

Հայկ Մարության

-Այսինքն նախագիծը կա, մնում է 600 մլն դրամ գտնել և սկսել աշխատանքները, պարոն Անտոնյան:

Արման Անտոնյան

-Շնորհակալություն տեղեկատվության համար, միգուցե տարեվերջին բյուջեն կազմելիս առաջնային ծախսերը հնարավոր լինի ընդգրկել, իսկ մնացածը փորձենք ներգրավել տարբեր միջոցներից կամ կարգի բերել նվիրատուների և գործարարների օգնությամբ: Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Հռիփսիմե Առաքելյան, խնդրեմ:

Հռիփսիմե Առաքելյան

-Շնորհակալություն, երկու օր առաջ մամուլում տեղեկատվություն տարածվեց, ինչը հաստատվեց նաև Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի, ինչպես նաև քաղաքապետի մամուլի քարտուղարի կողմից: Խոսքը վերաբերում է Շենգավիթ վարչական շրջանի 21 մանկապարտեզների տնօրեններին վարչական շենք հրավիրելուն և այնտեղ «օղակ» օպերացիա կազմակերպելուն: Ինչպես մեր հարգարժան գործընկերը, Էրքյուլ Պուարոյի սրամտությամբ և կանխամտածված նախագծի շրջանակներում, մանկապարտեզների տնօրենների հանդեպ ստորացման ակտ կազմակերպեց: Այդ տնօրեններից որևէ մեկը քրեական գործով չի անցնում, և քրեական գործի բացակայության դեպքում ոստիկան բերել տնօրենի վրա և բարոյական, և իրավական, և այլ տեսանկյուններից անընկալելի է:

Այո, ես համաձայն եմ, որ կասկածներ ունենալու դեպքում կան որոշակի գործիքակազմեր, որոնք պետք է կիրառվեն: Հարցս հետևյալն է՝ ցանկանում եմ իմանալ Ձեր տեսակետն այս հարցի շուրջ, պարոն քաղաքապետ, շնորհակալություն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցը նրանում է, որ մանկապարտեզներում սննդի հետ կապված միշտ խնդիրներ են առաջանում, և, բնականաբար, բոլոր վարչական շրջանների ղեկավարները փորձում են անել առավելագույնը, որպեսզի մեր երեխաներին հասնի որակյալ սնունդ՝ ճիշտ չափաբաժիններով: Թե ինչպես դա անել, յուրաքանչյուր վարչական շրջանի ղեկավար յուրովի է մոտենում այդ հարցին, քանի որ այդ գործառույթը նրանց պատվիրակված է քաղաքապետի կողմից:

Կարծում եմ, որ պետք է սպառել քաղաքապետարանի ունեցած բոլոր հնարավոր միջոցները, այնուհետև, դիմել այլ գերատեսչություններին: Այնուամենայնիվ այստեղ, կարծես թե, կա մի հանգամանք, որ քաղաքապետարանը չէր կարող անել այդ փորձաքննությունը, այդ պատճառով վարչական շրջանի ղեկավարը դիմել է այլ գերատեսչության: Սա իմ պատկերացումն է այս հարցի շուրջ, շնորհակալություն:

Հռիփսիմե Առաքելյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, մի արձագանք ևս. եթե կան այլ փաստեր, հանգամանքներ, ինձ թվում է կարելի է առանձին խոսել, զրուցել այդ տնօրենի հետ, նոր անհրաժեշտության դեպքում սկսել իրավական գործընթաց: Ես հուսով եմ, որ մյուս վարչական շրջանների ղեկավարներն այս ճանապարհով չեն գնա:

Հայկ Մարության

-Ես կարծում եմ պետք է ձայն տալ նաև Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարին, խնդրեմ, պարոն Մկրտչյան:

Ռազմիկ Մկրտչյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Տիկին Առաքելյան, ցավում եմ, որ ասածս ճիշտ չեք ընկալել, և այն որակավորումը, որ «օղակ» օպերացիա է տեղի ունեցել, ճիշտ չէ: Այդ հանդիպումը նախապես պայմանավորված է եղել, կազմակերպվել է կրթության, մշակույթի և սպորտի բաժնի ղեկավարի կողմից: Դա բնավ կապ չուներ այդ օրվա իրադարձությունների հետ: Մեր ուսումնասիրության արդյունքում մենք հիմնավոր կասկածներ ունեինք, որ մանկապարտեզների սննդի մուտքի և ելքի գրանցամատյաններում տեղի են ունեցել գրառումների վերափոխումներ: Այդ մասին հայտնել էինք ոստիկանություն և խնդրել ուսումնասիրություն իրականացնել, տալ իրավական գնահատական, քանի որ դա մեր գործառույթներից դուրս է: Ուսումնասիրելը հանցագործության մասին հայտարարություն տալ չէ, դա դեռ մեղադրանք չէ, մենք չենք մեղադրում մեր գործընկերներին: Եթե կան մարդիկ, որոնք թյուրըմբռնում են ունեցել այս հարցի վերաբերյալ, ես ցավում եմ:

Հռիփսիմե Առաքելյան

-Շնորհակալություն, հաջորդ հարցս վերաբերում է հետևյալին. քիչ առաջ լրագրողներից մեկը հրապարակեց տեղեկություն այն մասին, որ Չեխովի անվան դպրոցի տնօրենի հրահանգով աշակերտներին պարտադրվել է դպրոցի բոլոր հարկերը մինչև տարեվերջ ապահովել անձեռոցիկով և զուգարանի թղթով: Խնդրում եմ ուսումնասիրություն կատարել:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցի հետ կապված ասելիք ունի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

Տիգրան Վիրաբյան

-Շնորհակալ եմ, պարոն քաղաքապետ, ես նույնպես ստացել եմ այդ տեղեկությունը, փոխանցել եմ վերահսկողության վարչության պետ պարոն Ավետիսյանին: Վարչության աշխատակիցներն այս պահին աշխատում են դպրոցում: Վերջնական արդյունքների մասին Ձեզ կզեկուցենք:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սուրեն Էրամջյան, խնդրեմ:

Սուրեն Էրամջյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Առաջին հարցս վերաբերում է ձնամաքրման աշխատանքներին: Մայթերի մաքրման աշխատանքների հետ կապված կա որոշակիորեն օբյեկտիվ դժգոհություն, ընդ որում՝ տարբեր վարչական շրջաններից: Ես իմ պատկերացումը որոշակի առումով ունեմ, սակայն չեմ բացառում, որ սխալվում եմ:

Այնուամենայնիվ, ուզում եմ հասկանալ, թե այս անգամ ի՞նչը մեզ խանգարեց, որ չկարողացանք աշխատանքը մեր սահմանած նշաձողի մակարդակով իրականացնենք:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, այստեղ պատճառները շատ բնական են, մենք նոր ենք կազմավորել մեր համայնքային ընկերությունը, որն արդեն վերջնական համալրել ենք փողոցների ձնամաքրման և աղբահանության համար նախատեսված տեխնիկայով, և այդ աշխատանքները կատարվում են բարձր մակարդակով: Մայթերի մաքրման համար նախատեսված տեխնիկայով դեռ չենք հասցրել համալրել, իսկ սառցակալած մայթերը մարդկային ռեսուրսներով մաքրել հնարավոր չէր: Մեր ունեցած ռեսուրսներով բավական մեծ աշխատանք ենք կատարել, սակայն առանց համապատասխան տեխնիկայի հնարավոր չէր լինի հասնել ցանկալի արդյունքի: Այս տարվա ընթացքում գնումների միջոցով ձեռք կբերենք անհրաժեշտ տեխնիկա և հաջորդ տարի այդ խնդիրն այլևս չենք ունենա:

Սուրեն Էրամջյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, հաջորդ հարցս վերաբերում է Կենտրոն և Նոր Նորք վարչական շրջաններին, որտեղ կան թունելներ, վերգետնյա անցումներ և կամուրջներ: Նշված վայրերում պարբերաբար գոյանում են սառցալեզվակներ, որոնք պարբերաբար մաքրվում են, բայց կարճ ժամանակ անց կրկին ձևավորվում և շատ վտանգավոր են դառնում ավտոմեքենաների և անցորդների համար: Հարցս հետևյալն է. ունե՞նք որոշակի հերթապահության գրաֆիկ, որով ստուգվում են այդ վայրերը:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Ավետ Պողոսյանը:

Ավետ Պողոսյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, սա այն դեպքերից է, երբ մենք առաջին անգամ ստիպված ենք ինստիտուցիոնալ մեխանիզմներ ստեղծել, այսինքն մինչ օրս նման դեպքերում լուծումները տրվել են ըստ իրավիճակի: Հիմա ես առաջին անգամ առնչվում եմ մի երևույթի հետ, ինչի պատասխանը չունեմ: Նշված վայրերում հերթապահություն կատարվում է, մաքրվում է գրեթե ամենօրյա ռեժիմով, սակայն ահազանգեր շարունակում ենք ստանալ: Այժմ խորհրդակցություններ ենք անցկացնում տարբեր կառույցների ղեկավարների հետ՝ ճշտելու յուրաքանչյուրի լիազորությունների սահմանը՝ նշված խնդիրների վերացման գործում:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Լյուդմիլա Սարգսյան, խնդրեմ:

Լյուդմիլա Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, Դուք վերջին շրջանում բավականաչափ աշխատանք եք կատարել քաղաքի կենտրոնը բարեկարգելու, ասֆալտապատելու ուղղությամբ, բայց կենտրոնից դուրս շատ հատվածներ Ձեր ուշադրությունից դուրս են մնացել: Այդ մասին արձագանքելը մեր պարտավորությունն է:

Խոսքը վերաբերում է Թբիլիսյան խճուղուց դեպի Կորեայի ձոր տանող ճանապարհին, որը շատ կարևոր ճանապարհ է և գտնվում է վատ վիճակում: Վերջինիս նորոգման դեպքում քաղաք իջնող շատ ուղղություններ թեթևանալու են, խցանումների մեծ խնդիրներ չեն առաջանալու, և, որ ամենակարևորն է, դա Երևանի գողտրիկ անկյուններից մեկն է, որտեղ ժողովուրդը սիրում է հանգստանալ: Այդ վայրը կարող է հետաքրքրել նաև տուրիստներին, ինչին Դուք մեծ ուշադրություն եք դարձնում: Ի՞նչ ծրագիր ունեք այդ հատվածի նորոգման վերաբերյալ:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի շինարարության և բարեկարգման վարչության պետ պարոն Հարությունյանը, խնդրեմ:

Գրիգոր Հարությունյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Նախորդ տարի մենք այդ հատվածում բավական ասֆալտապատման աշխատանքներ ենք կատարել, այս տարի նույնպես նախատեսված է շարունակել, այնտեղ կա նաև վերանորոգման ենթակա փոքր կամուրջ: Բոլոր հարցերի լուծումներն արդեն գտել ենք և ունենք համապատասխան ծրագիր:

Լյուդմիլա Սարգսյան

-Շնորհակալություն, երկրորդ հարցս հետաքրքրում է իմ բոլոր գործընկերներին: Դուք գիտեք, որ բարդ վիճակ է ստեղծվել՝ կապված գրիպի համաճարակի հետ: Չեք կարծու՞մ, որ պետք է մեկ շաբաթով կարանտին հայտարարվի, քանի որ վարակն անընդհատ փոխանցվում և կրկնվում է, իսկ երեխաների հաճախելիությունը շատ ցածր է:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ պարոն Վիրաբյանը:

Տիգրան Վիրաբյան

-Շնորհակալություն, դպրոցներում բացակայության տոկոսն այսօր կազմել է ընդհանուր հաճախելիության 19,8%-ը, որը կազմում է 10541 աշակերտ, որից բժշկական տեղեկանք են ներկայացրել 37%-ը: Դա խոսում է այն մասին, որ բացակայող երեխաների ընդամենը 37%-ն է հիվանդ, և այս առումով սա կազմում է 100748 երեխա՝ ընդամենը 3%-4%: Ընդհանուր բացակայությունների թվի աճ կա, բայց սա զուտ սեզոնային վիրուս է, և որակել որպես համաճարակ, կարծում եմ, տեղին չէ: Բացակայությունների թվի մեծացման և մտահոգիչ լինելու դեպքում կձեռնարկվեն համապատասխան միջոցներ: Բոլոր դպրոցներում և մանկապարտեզներում համապատասխան բուժանձնակազմերն առավոտյան ընդունում են երեխաներին և, եթե զգում են, որ երեխայի մոտ կան հիվանդության նշաններ, նրան ուղարկում են տուն կամ ուղղորդում պոլիկլինիկա:

Ավելացնեմ նաև, որ բացակայությունների զգալի մասը Կենտրոն վարչական շրջանում է, ինչը ես կապում եմ թիվ 8 դպրոցի տնօրենի անզգույշ արտահայտության հետ, երբ սեզոնային գրիպն այլ որակավորում էր ստացել, ինչն էլ դարձավ լրատվամիջոցների քննարկման նյութ: Այսօր դպրոցի տնօրենը մեր լրատվականին տված հարցազրույցում պարզաբանում է ներկայացրել, որ իր կողմից դա եղել է անզգուշություն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցի հետ կապված ասելիք ունի քաղաքապետի տեղակալ պարոն Հարությունյանը, խնդրեմ:

Սերգեյ Հարությունյան

-Շնորհակալություն, քանի որ այդ հարցը շատ էր շահարկվում, մենք բավական մեծ ուսումնասիրություն կատարեցինք՝ հարցումներ անելով դպրոցներին, մանկապարտեզներին և տարբեր մանկական բուժհաստատություններին: Այս տարվա բացակայությունների ցուցանիշը նախորդ տարիների համեմատ ավել չէ, պարզապես այս տարի այդ շրջանը մի քիչ ուշ սկսվեց՝ կապված եղանակային պայմանների հետ: Մենք երեկ այդ թեմայով մի տեսանյութ հրապարակեցինք: Այն ծնողներին, որոնց երեխաները հիվանդ չեն, սակայն արգելում են հաճախել դպրոց կամ մանկապարտեզ, մենք հորդորում ենք այցելել առաջնային օղակ և պատվաստվել սեզոնային գրիպի դեմ՝ հետագա բարդություններից խուսափելու համար:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գրիգորի Երիցյան, խնդրեմ:

Գրիգորի Երիցյան

-Առաջին հարցը վերաբերում է ձնամաքրման և սառույցների մաքրման գործընթացներին, որի պատասխանն արդեն հնչեց: Պարզապես այս առիթն օգտագործելով

ուզում եմ նաև մի փոքր արձագանքել: Շատ հաճախ այն մայթերն, որոնք չեն մաքրվում, դրանք հիմնականում տարբեր տնտեսվարողների օբյեկտների դիմաց են: Ցանկանում եմ հիշեցնել մեր տնտեսվարողներին, որ կա ավագանու համապատասխան որոշում, որ բոլոր տնտեսվարողները պարտավորվում են իրենց օբյեկտի հարակից տարածքը մաքրել սառույցից և ձնից: Քաղաքապետարան գալուց տեսնում եմ, որ ոչ տնտեսվարողները, ոչ միջազգային կազմակերպությունների գրասենյակները և դեսպանատները դա չեն անում: Մեկ անգամ ևս ուզում եմ հորդորել, որ այդ գործառույթը միայն իրենց պարտավորությունն է: Քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումներին ևս հորդորել, որ վերահսկողություն իրականացնեն, տնտեսվարողների հետ կապը պահեն, հորդորեն, որ իրենց տարածքը պետք է մաքրվի իրենց կողմից, ոչ թե համայնքի:

Ինչ վերաբերում է առաջին հարցին՝ գիտեմ, որ շուտով՝ փետրվարին, մրցույթ է հայտարարվելու և առաջին հարյուր ավտոբուսների գնման գործընթացն սկսվելու է: Ինձ և մեր քաղաքացիներին հետաքրքրում է, թե ե՞րբ կարող ենք այդ հարյուր ավտոբուսները տեսնել Երևանի փողոցներում:

Հայկ Մարության

-Շնորհակալ եմ պարոն Երիցյան, ճիշտ եք, տնտեսվարողները պարտավոր են դա իրականացնել: Դա կամավոր բնույթ չի կրում, իրենց պարտականությունն է, պետք է մաքրեն: Ամռանը պետք է ավլեն, կանաչապատեն, ջրեն, ձմռանը՝ ձնից կամ սառույցից մաքրեն իրենց օբյեկտի դիմաց գտնվող մայթի հատվածը մինչև եզրաքար, որոշման մեջ այդպես է նշված: Վարչական շրջանների բոլոր ղեկավարներին հանձնարարական, իհարկե, եղել է աշխատել տնտեսվարողների հետ և ովքեր չեն կատարում իրենց պարտականությունները՝ տուգանել: Ինձ համար, որպես քաղաքացի, որպես Երևանի բնակիչ անհասկանալի է, ինչպես կարելի է իրենց խանութի կամ գրասենյակի դիմացը չմաքրել: Այդ օրենքներն ընդունվել են, որպեսզի մենք ահռելի գումարներ չծախսենք, տեխնիկան չպահենք: Պետք է որոշակի մասով իրենք կատարեն այդ աշխատանքները, կեսը մենք կմաքրենք, մյուս կեսը՝ իրենք, պարզ բաշխում է:

Երկրորդ հարցի հետ կապված՝ վերջին շրջանում բավականին հաճախ են մեր հանդիպումները ՎԶԵԲ-ի (EBRD) հետ, որը պատրաստվում է, վարկային միջոցներ ներգրավելով, ֆինանսավորել այս նախագիծը: 100 ավտոբուսը, եթե ամեն ինչ նորմալ լինի, ամենաշուտն այստեղ կլինի աշնանը, նորից եմ ասում, սա կախված է նրանից, թե ինչ արագությամբ կարտադրի հաղթող ընկերությունը: Տարբեր ընկերություններ, տարբեր արագություն ունեն, արդյոք իրենց պահեստներում ավտոբուսներ ունեն, թե ոչ: Լավագույն դեպքում դա կլինի աշնանը, գիտեք միջազգային գնումների այդ գործընթացը բավականին երկար է, ընթացակարգը կազմակերպվում է միջազգային գնումներով:

Գրիգորի Երիցյան

-Երկրորդը հարցը կապված է փողոցների միասնական ցուցանակների տեղադրման հետ: Նախկին նիստերից մեկի ժամանակ ասացիք, որ այդ աշխատանքներն ընթացքում են:

Ցանկանում եմ տեղեկացնեք ի՞նչ փուլում է աշխատանքները և ե՞րբ են սկսվելու գնումների և տեղադրման գործընթացը:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

Սերգեյ Հարությունյան

-Պարոն Երիցյան, հարցը գտնվում է նաև քաղաքապետի ուշադրության կենտրոնում: Երկու օր առաջ այդ հարցի հետ կապված քննարկում է եղել: Ստեղծագործ մարդկանց շրջանում մրցույթ է անցկացվել, խնդրել ենք առաջարկներ ներկայացնել: Այս պահի դրությամբ ստացել ենք երկու առաջարկ, երրորդ առաջարկը ներկայացնելու համար խնդրել են երկու օր՝ լրամշակելու համար: Նախնական տեսքը կա, մոտ երեք մարդուց ստացել ենք 5, 6 կամ 7 տեսակի առաջարկ:

Պարոն քաղաքապետ, հուսամ այս շաբաթ Ձեզ կներկայացնեմ պատրաստի էսքիզները և տարբերակները, որից հետո աշխատանքային խմբի հետ կուսումնասիրենք: Ոչինչ մեզ չի խանգարում 2-3 շաբաթից, երբ որ տեխնիկական բնութագիրը լրամշակված և պատրաստ կլինի, հայտարարել մրցույթ: Ինձ թվում է մարտ ամսին կհայտարարենք գնման մրցույթ:

Հայկ Մարության

-Պարոն Երիցյանի հարցին հավելյալ մեկ հարց տամ՝ մրցույթը բա՞ց է եղել բոլորի համար, յուրաքանչյուր մարդ կարո՞ղ էր մասնակցել, բոլոր ընթացակարգերով անցե՞լ է, կայքում տեղադրվե՞լ է: Հարցը տալիս եմ, որ վերջում չասեն տեղեկացված չեն եղել:

Սերգեյ Հարությունյան

-Այո, մի փոքր քննադատություն հնչեց ֆեյսբուքում, թե ինչու՞ է անվճար մրցույթը, որովհետև կար հարց, որ պետք է մենք դա պատվիրեինք, բայց ճշտեցինք մեր գործառույթից դուրս է, մշակութային արժեք է ներկայացնում: Ինձ են դիմում տարբեր գործընկերներ, դիզայներներ, ովքեր ասում են, որ եթե քաղաքի համար ինչ-որ բան պետք է կանեն: Դրա համար բաց մրցույթ հայտարարվեց, 3 ընկերություն, 3 անհատ մարդ մասնակցել են, նաև 2 հոգի ասել են, որ անվճար չեն անի, դա իրենց որոշումն է եղել:

Այո, մրցույթը եղել է բաց, ողջ ընթացակարգով, տարբերակ կար 7 կամ 11 օրվա: Մենք մի փոքր երկարացրեցինք, որ ովքեր ցանկություն ունեն հասցնեն: Այսինքն, ովքեր ցանկություն են ունեցել մասնակցելու, այդ ինֆորմացիան հասանելի է եղել և ֆեյսբուքյան էջով և պաշտոնական կայքով:

Գրիգորի Երիցյան

-Իհարկե շատ լավ է, որ դա բաց մրցույթով է եղել: Ամեն դեպքում մեր քաղաքացիները շատ լուրջ են վերաբերում նման փոփոխություններին, հատկապես, որ դա միասնական ձևով ամբողջ քաղաքում պետք է փոխվի: Ես ուզում եմ առաջարկել, որ անպայման վերջնական դիզայնը լինելուց հետո, դրվի հանրային քննարկման «Ակտիվ քաղաքացի» կայքում կամ քաղաքապետարանի ֆեյսբուքյան էջում, որպեսզի մարդիկ իրենց կարծիքը հայտնեն, քանի որ դա արվում է բնակիչների համար:

Երկրորդը՝ կցանկանայի անպայման հաշվի առնել ոչ միայն փողոցները, այլ նաև այգիները, պուրակները և մյուս բոլոր աշխարհագրական օբյեկտները, որոնցից շատերն այսօր Երևանում ցուցանակ չունեն: Ցուցանակներից բացի, կարող ենք մտածել որոշ հատվածներում ինչ-որ տեղեկատվական ցուցանակներ տեղադրել, որպեսզի զբոսաշրջիկները և երևանցիներն իմանան ինչ այգի է, ում է նվիրված, որն է դրա պատմությունը և այլն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լիլիթ Կիրակոսյան, խնդրեմ: Լիլիթ Կիրակոսյանը բացակայում է դահլիճից: Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սաթենիկ Մկրտչյան, խնդրեմ:

Սաթենիկ Մկրտչյան

-Շնորհակալություն, հարցս վերաբերում է մանկապարտեզներին, որն ինչ-որ չափով առնչվում է Շենգավիթ վարչական շրջանում տեղի ունեցած դեպքի հետ, բայց ավելի լայն է և կոնցեպտուալ: Ի՞նչ քայլեր ենք ձեռնարկում, որպեսզի վերահսկողության և մշտադիտարկման մեր համակարգն արդիականացնենք և կոնցեպտուալ փոխենք: Քանի որ այն համակարգը, որը մենք հիմա ունենք քաղաքապետարանում՝ ներառյալ վարչությունները, վարչական շրջանների համապատասխան ստորաբաժանումները, վերահսկողության վարչությունը, թեժ գիծը, այդ համակարգը, որը ժառանգություն ենք ստացել, խիստ և անմիջականորեն կախված է մարդկային գործոնից: Դրան հավելում ենք այն, որ շահերի բախման ոչ լիարժեք սահմանափակումներ ունենք, որի արդյունքում ունենք ազգակցական և ընտանեկան կապերով ենթակայություններ ամբողջ համակարգում:

Ցավում եմ, որ դեռ նորմ և օրենք չկա, որ կարողանանք մարդու անձնական տվյալները չխախտելով, այդ ողջ տեղեկատվությունը դուրս բերել: Այդուհանդերձ հստակ է, որ, օրինակ, ունենք բաժնի պետ և մանկապարտեզի տնօրեն, աղջիկ և մայր հարաբերակցություն, այդպիսի օրինակները շատ են: Այն ինչը, որ կարող ենք արդեն ակնադիտական հասկանալ: Արդյունքում ունենք շատ մեծ ռիսկեր, որով, բնական է, որ մեր

վերահսկողության համակարգն արդյունավետ չի գործում և ստիպված ենք ունենալ շատ ավելի կտրուկ լուծումներ, թեև իրավական տեսանկյունից նորմալ, բայց բարոյական տեսանկյունից դեռևս ոչ ընկալելի: Այս մասով, կարծում եմ, որ մի քանի փոփոխություններ են պետք: Առաջինը՝ պետք է հստակ կարողանանք էլեկտրոնային համակարգեր ներդնել, կրկին կարող եմ օրինակ բերել մանկապարտեզների ներկայությունները, որը մինչև այսօր հեռախոսով և բանավոր խոսակցություններով ենք փաստում. ներկայություն, որի հիման վրա նաև վճարում ենք: Ինչպես նաև առանձին, այսինքն այդ տեսչական ստուգումների գործառույթը շատ լղոզված է և ներառված է վարչական աշխատանքի մեջ, այնինչ մոնիթորինգը պետք է առանձին լինի և ռոտացիոն համակարգ լինի, որպեսզի ստուգողը և ստուգվողը չլինեն երկարատև միասին, մի կապի մեջ, չունենան արդեն նաև մարդկային հարաբերություններ, որպեսզի կարողանան արդյունավետ հսկել:

Այս ամբողջ համակարգի արդյունքում չենք կարողանում հստակ ասել, որ այն ստուգումները, որ իրականացնում ենք ողջ համակարգում, դրանք իսկապես, անակնկալ են լինում: Թեժ գծով աղբյուրները, կարող ենք նաև էլի ունենալ բազմաթիվ կասկածներ, որ բացահայտվում են մինչև արդյունքի հասնելը կամ մինչև ինչ-որ մի բան մտածում ենք, դրա հակազդող գործունեությունն արդեն ավելի արագ է մտածվում, իմ ասած կապերի արդյունքում:

Հարցս շատ ավելի գլոբալ է. արդյոք մենք նախատեսում ենք այս հարցի լուծումը, թեկուզ գործառութային ամբողջ համակարգի վերանայմամբ: Քանի որ այս քայլերով, իսկապես, ունենում ենք բազմաթիվ ահազանգեր, որոնցով հստակ հասկանում ենք, որ խնդիր ունենք, բայց փաստի ձեռքբերման մասով ստիպված ենք լինում դիմել ՀՀ ոստիկանություն, բազմաթիվ տեսչական մարմիններ, որոնք, ըստ էության, մեր համակարգից դուրս են: Շատ ծայրահեղ և հուսահատ քայլեր են, բայց արդյունքն ստիպված ենք լինում այդ ճանապարհով գնալ հենց այս ամենով պայմանավորված:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը, խնդրեմ:

Տիգրան Վիրաբյան

-Շնորհակալություն հարցի համար: Պետք է լինեմ շատ անկեղծ: Մեկ տարի և երեք ամիսների ընթացքում, որ ասում են մանկապարտեզ, ինձ համար, դա չի ասոցացվում երեխայի, կրթական մեթոդների, բարի տրամադրությունների հետ: Ասում են մանկապարտեզ, մտածում ենք ստուգում կամ մտածում ենք, ում բռնենք: Ցանկանում եմ ձեզ հավաստիացնել, որ հանցագործներ չկան համակարգում: Այնպիսի տպավորություն է, որ

ամեն օր մտածում ենք մեխանիզմներ, թե ինչպես մարդկանց բռնենք, ինչպես ավելի խստացնենք:

Երևանի քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզներում տնօրեններին ավելի շատ ստուգում են, քան իրենք ժամանակ են ունենում աշխատելու: Քանի որ տնօրեններին ստուգում են, առաջին օղակ՝ վարչական շրջանի համապատասխան բաժինը, ամեն օր: Պարոն Ավետիսյանը երեկ թիվ է ներկայացրել, Շենգավիթ վարչական շրջանում, մեկ տարվա մեջ 240 անգամ ստուգել են, շաբաթ, կիրակի օրերը չեն ստուգել: Ստուգումներ են անցկացնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության, հանրակրթության վարչությունները, ստուգում են սննդի անվտանգության տեսչական մարմինը, առողջապահության նախարարության այլ տեսչական մարմինները: Այնպիսի մի համակարգում ենք, որ տնօրենը, երբ առավոտյան գալիս է աշխատանքի, սպասում է, թե երբ պիտի մտնեն իրեն ստուգեն: Մտածելու, ստեղծարար աշխատանք կատարելու ժամանակ չենք թողնում այդ մարդկանց:

Չեմ հիշում ավագանու որևէ նիստ կամ որևէ դեպք, որ մենք չխոսենք, թե էլ ինչ մեթոդներ կիրառենք, որպեսզի ավելի շատ ստուգելու հնարավորություն ունենանք այդ մարդկանց: Ժողովուրդ հանգիստ թողեք այդ մարդկանց, վստահեք նրանց, թող աշխատեն, անընդհատ պետք չէ նոր մեթոդներ փնտրել, թե հիմա ինչ մեխանիզմով ստուգենք: Մենք գիտենք բոլոր մեխանիզմները, ստուգում ենք ինչքան պետք է: Ստուգում ենք ոչ այնքան, որ մարդուն նյարդայնացնենք, թողնի գնա կամ մտածի, որ իրեն հանցագործի նման են վերաբերվում: Ստուգում ենք այնքան, ինչքան անհրաժեշտ է և արդյունքները մեզ բավարարում է: Ունենք համապատասխան վարչություն՝ վերահսկողության վարչությունը, որն անակնկալ այցելություններ է անում, առանց որևէ մեկին զգուշացնելու, նույնիսկ ես տեղյակ չեմ լինում: Իրենք ստուգում են և արդյունքներ մասին զեկուցում են քաղաքապետին, քաղաքապետից եմ տեղեկատվություն ստանում:

Այո, եթե կա որոշակի տեղեկատվություն, որ տեղի են ունենում չարաշահումներ, բնականաբար, պետք է ստուգվեն և պատժվեն այդ մարդիկ: Սակայն սա չպետք է լինի մեր ամենօրյա աշխատանքի հիմնական մոտիվացիան, որ առավոտյան արթնանանք, մտածենք, թե ում ստուգենք, ում մոտ ինչ հայտնաբերենք: Քանի որ այդ ստուգումները, ինչքան էլ տալիս են իրենց արդյունքները, կա հակառակ ազդեցություն, որ մենք ամեն օր կոլեկտիվներին լարվածության մեջ ենք պահում: Ամեն օր այդ մարդիկ մտածում են, թե այսօր ով պետք է գա մեզ ստուգի ու ինչ խնդիր պետք է առաջադրի: Այն նոր մեխանիզմները, որոնք ցանկանում ենք ներառել, եկեք դրանք չլինեն ստուգման մեխանիզմներ: Լինեն, օրինակ, տնօրեն նշանակվելու կարգի մեջ փոփոխություն կատարելու մեխանիզմ, թե ով իրավունք ունի

դառնալ մանկապարտեզի տնօրեն կամ Ձեր ասած այդ փոխկապակցվածությունը, որը հիմա էլ կա: Մեզ գալիս է կարծիքի, եթե օրենքը թույլ է տալիս, մենք չենք նայում, թե արդյոք ում հետ է փոխկապակցված և չենք կարող այդ հիմքով մարդուն թույլ չտալ նշանակել, որովհետև օրենքում նման սահմանափակում չկա:

Այո, համաձայն եմ, որ տնօրենների ընտրության կարգում պետք է կատարվեն փոփոխություններ, պետք է չափորոշիչներ սահմանվի, թե արդյոք ով կարող է լինել մանկապարտեզի տնօրեն և այլն: Եկեք այդ կողմից սկսենք, ընտրենք մարդիկ, ում վստահում ենք, ոչ թե պահենք մարդիկ, ում անընդհատ փորձենք ստուգել և վերաբերվենք որպես հանցագործի: Կարծում եմ, որ այսօրվա մեր ունեցած գործիքակազմը՝ այն վարչությունները և վարչական շրջանների աշխատակազմերը, որոնք կան, բավարար են այս իրավիճակում մեզ նորմալ, հանգիստ զգալու համար, որ մանկապարտեզներում ունենք խաղաղ, հանգիստ վիճակ:

Սաթենիկ Մկրտչյան

-Պարոն Վիրաբյան իզուր եք անձնական ընդունում իմ ասածը կոնկրետ մանկապարտեզների հետ կապված: Իմ ասածն էլ այն է, որ մեր համակարգն արդյունավետ չէ, որի արդյունքում ունենում ենք ստուգումների շատություն և ոչ արդյունք: Այդ մասով ես կոնկրետ դրա մասին էի խոսում և Ձեր ասածի հետ էլ համաձայն եմ: Գիտեք մենք քննարկումներ ունեցել ենք մանկապարտեզների տնօրենների ընտրության կարգի փոփոխության վերաբերյալ, բայց իմ հարցադրումը կոնկրետ կոնցեպցիայի փոփոխության մեջ է, որ այսօրվա մեր գործող համակարգը բերում է Ձեր ասած իրավիճակին: Լինում են շատ ստուգումներ, բայց, կարծես թե, մարդկանցից դժգոհությունները և կասկածները չեն պակասում: Այնպես, որ կարծում եմ մենք նույն բանի մասին ենք խոսում և որևէ մեկն այստեղ որևէ տնօրենի որպես հանցագործի չի վերաբերվում: Ընդամենը ես մատնանշեցի բազմաթիվ կետեր, որոնց հետ Դուք էլ համաձայն եք: Դրանք բերում են ինչ-որ իմաստով անարդյունավետ մեխանիզմի, որի արդյունքում ունենում ենք 240 ստուգում և մարդկանց իզուր տեղը լարվածության մեջ ենք պահում:

Կարծում եմ, որ այս քննարկումները պետք է շարունակենք վերահսկողության և մոնիթորինգի ավելի լավ համակարգ ներդնելու ուղղությամբ, որպեսզի չունենանք այս իրավիճակն ավելի խորացած: Քանի որ մենք 1,5 տարի է այստեղ ենք, կարողանում ենք որոշումներ ընդունել, բայց շատ հարցերում արդյունքները գոհացուցիչ չեն հենց մեզ համար, նաև ինքնաքննադատ լինելու համար, ավելի առաջ ընկնելու և խնդիրները կանխատեսելու տեսանկյունից: Որևէ մեկի աշխատանքի մասին չէր իմ ասածը, այլ ավելի առաջ նայելու ուղղությամբ:

Տիգրան Վիրաբյան

-Տիկին Մկրտչյան, համամիտ եմ Ձեզ հետ, ուղղակի մենք պետք է դիտարկենք, եթե ստուգումների արդյունքում ոչինչ չի բացահայտվում, դա չի նշանակում, որ վատ են ստուգում, դա նշանակում է, որ բացահայտելու ոչինչ չկա: Երեկ այս թեմայով մենք քննարկում ունեցել ենք. Շենգավիթ վարչական շրջանում, որ ստուգել են, որևէ երեխայի թվի ավել չի եղել, բայց դա չի նշանակում, որ կար, ուղղակի վատ են ստուգել: Դա նշանակում է, որ նորմալ աշխատել են և երեխաների թվի տարբերություն չի եղել: Այն ստուգումները, որտեղ մենք ոչինչ չենք բացահայտում, ասում ենք դրանք նորմալ ստուգումներ չեն: Մենք պետք է ընդունենք, որ ստուգել են և չի հայտնաբերվել ոչինչ, պետք է վստահություն ունենանք նաև ստուգող ոլորտի հանդեպ:

Չկա մի դեպք, որ քաղաքապետի, տեղակալի, վարչության կամ այլ կողմից որևէ մեկն արտոնություն ստացած լինի: Չկա նման դեպք, վերահսկողության վարչությունն ազատ է իր գործողություններում: Ստուգել են, մի քանի դեպքեր եղել են, այդ մարդկանց գործերը հայտնվել են համապատասխան վայրում, առանց աղմուկի: Մենք մեր լիազորություններն ենք կատարում, մեր գործն ենք անում: Առանձին ամեն դեպքի համար աղմուկ բարձրացնելու անհրաժեշտություն չենք տեսնում: Մի քանի մանկապարտեզների տնօրենների գործեր ուղարկվել են համապատասխան կառույցներ, որովհետև գտնում ենք, որ այդ մարդիկ պետք է պատժվեն իրենց արածների համար: Մեր աշխատանքը, որ մենք չենք հանրայնացնում, չի նշանակում այդ աշխատանքը չի արվում, որովհետև դա մեր աշխատանքն է, մենք լուռ անում ենք: Հանցագործները պատժվում են, իսկ այն մարդիկ, ովքեր հանցագործության մասնակից չեն, շնորհակալություն իրենց բարեխիղճ աշխատանքի համար:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Հովհաննիսյան, խնդրեմ:

Լևոն Հովհաննիսյան

-Շնորհակալություն պարոն քաղաքապետ, ինձ խնդրանք են փոխանցել, որպեսզի հնչեցնեմ: Այս ընթացիկ տարվա հունվարի 17-ին Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի հ.21 դպրոցի մոտ աշակերտներից մեկը փողոցն անցնելիս վրաերթի է ենթարկվել: Դպրոցը, եթե տեղյակ եք, գտնվում է ՌԴ մշակույթի, կրթության նախարարության ենթակայության տակ, հասցեն՝ Զաքարիա Քանաքեռցու փողոց հ.54: Դպրոցն ունի մոտ 500 աշակերտ, 17-18 ծնող դիմել են դպրոցի տնօրենին և խնդրել են, որպեսզի քաղաքապետարանի և ճանապարհային ոստիկանության հետ տեղադրվի հետիոտնային կանչով կարգավորվող լուսացույցով անցում: Փոխանցում եմ ծնողների խնդրանքը, եթե հնարավոր է մենք ևս միջնորդենք, այդտեղ հավելյալ խցանումներ չեն առաջանա, քանի որ բավականին ծայրամասում է գտնվում: Մենք

էլ մեր կողմից փորձենք օգնել, որպեսզի երեխաներն անվտանգ այցելեն իրենց ուսումնական հաստատությունը:

Հայկ Մարության

-Շնորհակալ եմ պարոն Հովհաննիսյան, այդ առումով արդեն ունենք այս տարվա բյուջեում նախատեսված կոնկրետ միջոցներ, բացի դրանից դրված են նախագծեր:

Պարոն Սարգսյան այս պահին արդեն հանձնվա՞ծ են այդ 11, թե 15 նախագծերը.

Հրաչյա Սարգսյան

-11լուսացույց արդեն պատրաստ են, տեղադրման աշխատանքներն սկսել են: 26 լուսացույցի նախագծերը նոր են սկսվել:

Հայկ Մարության

-11 լուսացույցերն արդեն պատրաստ են, տեղադրման աշխատանքներն սկսել են: 26 լուսացույցի նախագծման աշխատանքներն ընթացքում են, բայց ես չգիտեմ այդ 26-ի մեջ տվյալ դպրոցի հասցեն կա թե ոչ, պետք է նայել: Ուզում եմ ասել, որ առաջնահերթությունն այսպես է եղել՝ գույքագրել ենք բոլոր այն կետերը, որտեղ ունեցել ենք ճանապարհատրանսպորտային պատահարներ, որոնց հետևանքով եղել են վիրավորներ կամ, ցավոք սրտի, զոհվածներ, առաջնահերթությունը տրվել է ամենաթեժ կետերին: Քանի որ հնարավոր չէ միանգամից այդ լուսացույցերը տեղադրել 300 կետում, այս պահին պետք է այդ լուսացույցերը տեղադրել 37 կետում, որոնք ամենավտանգավոր կետերն են: Այնուամենայնիվ, այդ հասցեն կնայենք:

Հարցին կանդրադառնա քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Էդգար Գալստյանը:

Էդգար Գալստյան

-Պարոն քաղաքապետ, նշված փողոցում նախատեսված է տեղադրել հետիոտնային կանչի երկու լուսացույց, բայց այդ հատվածում նախատեսված չի եղել և այդ 37-ի մեջ չկա: Ձեր հանձնարարությամբ անցած շաբաթ նորից գույքագրվել են չկարգավորվող հետիոտնային անցումները: Ճանապարհային ոստիկանության հետ քննարկվել է, երկու օր առաջ պատասխանն ստացել ենք: Այս տարվա ընթացքում ճանապարհային ոստիկանության հետ անվտանգությունն ապահովելու կտրվածքով միջոցառում կձեռնարկենք, սակայն դրա հետ կապված աշխատանքները կդիտարկենք հաջորդ տարվա մեր աշխատանքային ծրագրերում, որովհետև այս տարի 37-ը ընթացքի մեջ է:

Հայկ Մարության

-Դուք գույքագրումը վերջացրե՞լ եք:

Էդգար Գալստյան

-Գույքագրումը երկու օր առաջ վերջացրել ենք, ոստիկանությունից ստացել ենք և պետք է ամփոփենք:

Հայկ Մարության

-Թվաքանակն ունե՞նք:

Էդգար Գալստյան

-Պարոն քաղաքապետ, մոտավորապես 30-ից ավել տեղ արդեն ուղարկվել է: Խցանումների հետ կապված հրատապություն կա այդտեղ միջոցներ ձեռնարկել, դա չի նշանակում, որ միայն հետիոտնային կանչի ռեժիմով աշխատող լուսացույցով կկարգավորենք: Այսինքն այդ 30-ը կառանձնացնենք, որտեղ երթևեկության անվտանգության ապահովման և նորմերի տեսանկյունից թույլատրելի է լուսացույցով կկարգավորենք, շատ տեղերում կկառուցվեն նաև արհեստական անհարթություններ, այս պահին այդ աշխատանքներն են տարվում:

Հայկ Մարության

-Այդ հասցեում լուսացույցը կհիշե՞ք քանի մետր հեռավորության վրա է գտնվում:

Էդգար Գալստյան

-Կոնկրետ հեռավորությունը չեմ հիշում, բայց նշված փողոցն այդ 26-ի մեջ ներառված է: Շնորհակալ եմ, դիմում եմ մեր քաղաքացիներին, որ մենք այս ուղղությամբ աշխատանքներ ենք տանում, կոնկրետ հանձնարարականները կան, լուսացույցերի տեղադրման աշխատանքներն արդեն սկսել են: Մեկ օրվա ընթացքում ամբողջը հնարավոր չէ անել, լինելու է փուլային, այդ իսկ պատճառով խնդրում եմ ուշադիր լինել և օգտվել մոտակա լուսացույցից, այդ մի քանի րոպեն չափսոսալ և ավելի անվտանգ անցնել փողոցը:

Լևոն Հովհաննիսյան

-Պարզապես կուզենայի մի դիտարկում անել. քանի որ դպրոցը ՌԴ կրթական համակարգի ցանկում է ներգրավված, խնդրում եմ տվյալ հասցեն նայել, որ հանկարծ գույքագրման պատճառով վրիպում չլինի, իսկ եթե ընդգրկված է, շատ ավելի լավ:

Պարոն քաղաքապետ, քանի որ Դուք երթևեկության անվտանգության վրա և արագության հետ կապված շատ մեծ շեշտ եք դնում, կարծում եմ լուծումը կստացվի:

Հայկ Մարության

-Իսկապես շատ եմ կարևորում, գործակարգավարական խորհրդակցությունների ժամանակ այս հարցին անընդհատ անդրադառնում եմ: Բոլոր ուղղություններով աշխատելու ենք, լուսացույցեր ենք տեղադրելու, որտեղ պետք է անհարթություններ ենք տեղադրելու, որոնք բոլոր նորմերին պետք է համապատասխանեն: Երկու դեպքում եթե հարցը չլուծվի,

կկառուցենք վերգետնյա անցումներ, այս ամենն ակտիվ արվելու է: Խնդրում եմ բոլորին փողոցն անցնելիս զգույշ և ուշադիր լինել:

Ամբողջ աշխարհում ընդունված է, որ հետիոտնային անցումով անցնելիս պետք է վիզուալ կոնտակտ հաստատել վարորդի հետ: Սա փոքր կանոն է, բայց շատ կարևոր է, որովհետև եթե վիզուալ կոնտակտ չլինի վարորդի հետ, հավանական է, որ նա քեզ չտեսնի: Այս տիպի փոքր մանրունքները կարող են մարդկանց կյանք փրկել: Կարծում եմ այս տիպի գիտելիքները նախ պետք է ծնողներն ունենան և հետո փոխանցեն իրենց երեխաներին, այս ամենը պետք է արվի նաև դպրոցներում:

-Պարոն Վիրաբյան, դպրոցներում այսպիսի դասընթացներ ունե՞նք:

Տիգրան Վիրաբյան

-Ոչ, պարոն Մարության, կոնկրետ դասընթացներ չկան, բայց հաճախակի տարբեր սեմինարներ են կազմակերպվում:

Հայկ Մարության

-Առաջարկում եմ այս շրջանակում խորհրդակցություն կազմակերպել, սա շատ կարևոր է: Օրինակ՝ Բագրատունյաց փողոցում գտնվող վերգետնյա անցումը, որը շատ վատ տեղ է կառուցված և ոչ ոք չի օգտվում այդ վերգետնյա անցումից: Բազմիցս ասել եմ նույնը նաև Նալբանդյան փողոցում՝ հրապարակի մոտ, մետրոյի ստորգետնյա անցումից չեն օգտվում և մարդկանց գրեթե 90%-ն անցնում են փողոցով, որը բավականին վտանգավոր փողոց է: Այդտեղ լուսացույց չկա, իսկ ստորգետնյա անցումը բավականին լավ վիճակում է գտնվում:

Ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի անդամներ, Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 1-ին նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Կազմեց՝ Ա. Եփրիկյան